


2779

3K26

7-35



Վ. ՊԱՐՍԱՄՅԱՆ

Լ Ե Ն Ի Ն Ը

ՅԵՎ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՆ

9(47.92)
7-35

ՅԵՐԵՎԱՆ

1 9 3 5

08 JUN 2005

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՄԱՐԺԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՆԻՆԻԶՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՅԿ 26

Պ-35

պ.

Վ. ՊԱՐՍԱՍՅԱՆ

20 NOV 2009

Լ Ե Ն Ի Ն Ը

Յ Ե Վ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՆ

(ԼԵՆԻՆԻ ՄԱՀՎԱՆ 11-ՐԴ ՅԵՎ ԱՆԴՐՁԵ-
ԴԵՐԱՅԻՆՈՒԹՅԱՆ 13-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ)

(ԱՐՏԱՏՊՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԺԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՆԻՆԻԶՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏԵԼԵԿԱԳԻՐ № 1 (5)-ԻՑ

56

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1 9 3 5

ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ԱՆԴՐԿՈՎ ԿԱՍՅԱՆ ՖԵԴԵՐԱՅԻԱՆ

Անդրկովկասի բանվորական-հեղափոխական շարժումները ևս սերտ կերպով կապված են պրոլետարական հեղափոխության մեծ վարպետի, բոլշևիզմի խոշորագույն թեորետիկի ու ստրատեգիի— Լենինի անվան հետ։ Յեվ դա հասկանալի չէ։

Անդրկովկասում բանվորական շարժումը մտավ իր կազմակերպված փուլը իբրև գերազանցորեն ինտերնացիոնալ շարժում։ Վո՛չ ուսանական ցարիզմի նենդ ու բռնակալ ազդային քաղաքականությունը և վո՛չ էլ տեղական նացիոնալիզմի կեղծ ազդասիրական—հայրենասիրական գաղափարների քարոզը չկարողացան, և չէին էլ կարող, մեռցնել Անդրկովկասի բանվորական շարժման ինտերնացիոնալ վոզին, մի անգամ ընդմիջող վերջ դնել Անդրկովկասի տարբեր ազգությունների և ուսանական պրոլետարիատի համերաշխ, միասնական պայքարին։

Անդրկովկասի բանվորական շարժումը, տակավին իր խոնարհության շրջանից, կապված է յեղել ուսանական ավագ պրոլետարիատի հեղափոխական շարժման հետ ավելի ամուր, ավելի սերտ, քան Անդրկովկասի իբրև գաղութի և Ռուսաստանի իբրև մետրոպոլիայի կապը տնտեսական-քաղաքական կյանքի մնացած բոլոր բնագավառներում։ Այստեղից էլ, ինքնին արդեն հասկանալի չէ, Վո՞ր Անդրկովկասի, ինչպես նաև ցարական ինքնակալության կրնիլի տակ ճնշվող մյուս յերկրների աշխատավորության ազատագրությունը չէր կարող վրիպել բոլշևիզմի մեծ կուսակցության հիմնադրի ու առաջնորդի՝ Վլադիմիր Իլիչ Լենինի տեսագաղաչության։

Ճիշտ է, Լենինի հարուստ ու մեծածավալ գրական ժառանգության մեջ համեմատաբար մենք քիչ բան կգտնենք Անդրկովկասի վերաբերյալ, սակայն, բավական է մոտիկից ուսումնասիրել նրա առաձևերը, թափանցել այդ մտքերի խորքը, ճիշտ ըմբռնել այն, տեսնելու համար, թե ինչպես, նույնիսկ կողմնակիորեն արած նրա դեմոկրատիզմները, փոքրաթիվ նամակները, ցուցումները կատարյալ պարզությամբ լույս են սրվում ուսում Անդրկովկասի հեղափոխական շարժումների այս կամ այն բնագավառի վրա։

Ինչպես հայտնի չէ, Լենինը քանիցս անգամ արձեռնել է հայկական շարժմանը և իր հանձարին հատուկ խորությամբ տվել է այդ շարժման ու նրա ղեկավար կուսակցությունների ճիշտ գնահատականը։

«Развитие капитализма в России» հոյակապ իր աշխատության մեջ, դեռևս 90-ական թվականների վերջերին, Լենինը, հակառակ Անդրկովկասը ցարիզմի պրովինցիա դիտելու տարածված կարծիքին, հիմնված պատմա-տնտեսագիտական անալիզի վրա, ցարիզմի քաղաքականությունն Անդրկովկասում բնութագրել է իբրև նվաճողական, գաղութայնացման քաղաքականություն, իսկ Անդրկովկասն՝ իբրև գաղութ։ Առաջին ուսանական հեղափոխության շրջանում, 1905—1907 թվականներին, և նույնիսկ դրանից էլ առաջ, հին «Իսկրա»-յի որոք, կապվելով կովկասյան ոսցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավար գործիչների հետ, գլխավորում և ուղղություն է տալիս նրանց, ինչպես նաև հետագա տարիների բոլշևիզմի կազմակերպ-

պուլթյան պաշարքին, Լենինը, ընկ. Ստալինին հետ, դատարանից ե Անդրկովկասի բոլշևիկներին մի ամբողջ սերունդ և պրոլետարական հեղափոխության ակամավոր ղեկավար կազմեր: Այդ շրջանումն է նամակապես, յերբ Լենինն իր հեղինակավոր խոսքն է ասում Անդրկովկասի ազգային անսահմանիմ, հայ-թուրքական կոտորածների մասին, տալիս է այդ դեպքերի վերլուծումը, մերկացնելով ցարիզմի ջարդարար ազգային քաղաքականությունը: Առանձնապես հիշատակում է արժանի յե, կուսակցության յերկրորդ համագումարից հետո, կովկասյան մենշևիկների դեմ բռնիքները միշտ սուր պայքարում Լենինի ունեցած ջերմ մասնակցությունը:

Մեր կուսակցության պատմության մեջ դրանք տարիներ եյին, յերբ վճռվում էր բոլշևիզմի և մենշևիզմի, հեղափոխական մարքսիզմի և ոպորտունիզմի միջև յեղած պայքարի բախտը վո՛չ միայն ուսական, այլև միջազգային մասշտաբով: Հենց դրա համար էլ անհաշտ պայքար մղելով մենշևիկ ոպորտունիստների դեմ կենտրոնում Լենինն առանձին ուշադրություն էր դարձնում նաև տեղական կազմակերպությունների, նույն թրվում և հին «Խսկրա»-յի կարևոր հեռարաններից մեկը հանդիսացող Կովկասյան Միաբնակ Կոմիտեյի վրա, ձգտելով հեռու պահել այդ կազմակերպությունները մենշևիկների ազդեցությունից, վերածել դրանք ոպորտունիզմի դեմ մարտնչող կենտրոնների: Այս տեսակետից բնորոշ է 1903 թ. հոկտեմբերին Ժնևից ՌՄԴԿ Կովկասյան Միության Կոմիտեյին Լենինի դրած (Պլեխանովի հետ միասին ստորագրած) նամակը, վորտեղ նրանք խորհուրդ են տալիս «Բազմազան վստահությունը, նրանց չտալ պատշաճ անհատական պատեր և ամուր բռնել այն ուղին (հին «Խսկրա»-յի վ. Պ.), վորի վրա կանգնել են»^{*)}: Ել չենք խոսում Մ. Գ. Հայ կազմակեր-

պուլթյան (սպեցիալիզմներին) տված նրա գնահատականի, ազգային յեղունեքով մարքսիստական գրականություն հրատարակելու, հեղափոխական կոնսպիրացիոն աշխատանքները կազմակերպելու և ղեկավարելու մեջ ունեցած մասնակցության մասին և այլն:

Վերջապես շատ մեծ է յեղել Լենինի ղեկավար դերն Անդրկովկասի բոլշևիկներին վրա, ընկ. Ստալինի հետ միասին, Անդրկովկասի Հոկտեմբերի նախապատրաստման ու հաղթանակի կազմակերպման շրջանում: Նրա մի շարք նամակները, հեռագրերն ու պրակտիկ ցուցումներն ընկ. Ստալինին, Կովկասի արտակարգ կոմիտար և Բազմի հերոսական կոմունայի ղեկավար Շահումյանին, ընկ. Որջոնիկիձեյին և ուրիշներին՝ հոյակապ պարզությամբ պատկերացնում են Լենինի կատարած ղեկավար դերն Անդրկովկասյան իմպերիալիզմի և ազգային բուրժուազիայի լծից ազատագրելու, Անդրկովկասում պրոլետարիատի դիկտատուրա ստեղծելու գործում:

Անդրկովկասի բոլշևիկներին համար Լենինը վո՛չ միայն անձնավորություն, այլև ծրագիր է յեղել:

Բայց այս ամենի մեջ ավելի փայլուն, ավելի կարևոր տեղ է գրավում Վ. Ի. Լենինի մեծ նախաձեռնությունը՝ Անդրկովկասում հեղափոխության հաղթանակն ամրապնդելու, ազգային համերաշխություն ստեղծելու՝ անդրկովկասյան խորհրդային հանրապետությունների Ֆեդերացիա կազմելու գործում:

Շուտով մենք տեսնելու յենք Անդրկովկասյան Ֆեդերացիայի 13 տարին: Անդրֆեդերացիայի 13 տարիները՝ դա պրոլետարական հեղափոխության, Լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հաղթանակի փառապանծ տարիներ են, վոր Անդրկովկասի բազմազգի յեղբայրակից բանվորներն ու գյուղացիները նվաճել են կոմունիստական կուսակցության ղեկավարությունը:

Վերջապես ավելի քան պարզ ու հասկանալի լինի Անդրկովկասյան Ֆեդերացիայի պատմական նշանակությունը:

նր, նրա կատարած խոշոր հեղափոխական դերն անդրկովկասյան ժողովուրդների ազգային համագործակցության, տնտեսական-քաղաքական-կուլտուրական կյանքի սոցիալիստական դարգացման, Անդրկովկասը խորհրդային մեծ Միության որինակելի մի հանրապետության վերածելու գործում, անհրաժեշտ է պատմական հետադարձ մի հայացք գցել նախախորհրդային Անդրկովկասի վրա, ցույց տալու համար, թե ի՞նչ եյին ներկայացնում իրենցից ազգային հարաբերություններն այդ շրջանում:

* * *

Անդրկովկասի ժողովուրդների ազգային հարաբերությունների անցյալի պատմության մեջ կարելի յե նշել յերկու ետապ: Առաջին ետապն ընդգրկում է ցարական ինքնակալության կամ Կովկասի փոխարքայության տիրապետություն շրջանը, իսկ յերկրորդ՝ հեղափոխական Ռուսաստանից անջատ հայտարարված ազգային բուրժուա-կալվածատիրական հանրապետությունների «անկախություն» շրջանը:

Առաջին ետապը բնորոշ է ցարիզմի զաղութային ու ավելի քան վայրենի ազգային քաղաքականությամբ հրապարակապես անտագոնիզմով, արյունահեղ ընդհարումներով և կոտորածներով:

— Լարել թուրքերին հայերի դեմ, հայերին՝ թուրքերի, վրացիների և այլն. այսպես է յեղել ցարիզմի ազգային և զաղութային քաղաքականությունը իրագործող անդրկովկասյան ազմինիստացիայի գործելակերպը, մանավանդ հեղափոխության տարիներում՝ հեղափոխական ինտերնացիոնալ Ֆրոնտը ջլատելու նպատակով: Ռուսական բուրժուազիայի ու կալվածատիրության սև-հարյուրակային նացիոնալիստական աշդրինակ քաղաքականությունը չափազանց թանգ է նստել Անդրկովկասի աշխատավորության վրա:

Հետևելով իշխողների փորձված «բաժանի՛ր և տիրի՛ր» լողնողին, ցարական իմպերիալիզմն Անդրկովկասում սկզբից ևեթ ճիշտ բմբունեց

տեղական ժողովուրդների ազգային կազմի ոգտագործման անհրաժեշտությունը՝ իր իմպերիալիստական ձգտումներն իրականացնելու գործում և չ ղենքի ու մտրակի ուժից բացի, ձեռնամուխ յեղավ տեղական ազգություններին իրար դեմ լարելու, ազգամիջյան արյունոտ ջարդեր կազմակերպելու քաղաքականության:

Անդրկովկասում քաղաքականակ ազգությունների զոյություն փաստն ինքնին արդեն թելադրում էր ցարական կառավարությանը վարել նաև համապատասխան վարչական-տնտեսական քաղաքականություն: Յեվ, ինչպես հայտնի յե, յերբ 19-րդ դարի առաջին կեսում ավարտվում է Անդրկովկասի քաղաքական նվաճումը և հետեֆորմյան եսրիսայում սկսվում է Անդրկովկասի ուժեղ զաղութայնացման պրոցեսը, ցարական կառավարությունն իր մտքում ձորտա տիրական ուֆորմներով, դասային, վարչական իրավունքների փոփոխումով, ընդվորում և՛ իր սոցիալական հենարանն ամրացնելու նպատակով Անդրկովկասի տարբեր ազգությունների իշխող դասերին տված տարբեր արտոնություններով, գցում է ազադա ազգային անտագոնիզմի տնտեսական հիմքերը:

70-80-ական թվականներին, յերբ Անդրկովկասում բուռն թափով սկսում է զարգանալ կապիտալիզմը և արագորեն ձևավորվել աուտրա-արդյունաբերական բուրժուազիայի ազգայնական իդեոլոգիան, այդ շրջանում ահա, ազգային բուրժուազիայի շարքերում իր ձայնն է հնչեցնում մարտական նացիոնալիզմը, հետզհետե սրվում են հայ բուրժուազիայի, վրաց ադնակախության և թուրք բեզերի ու խաների հարաբերությունները: Ցարական կառավարության ցանած սերմերը տեղական բուրժուազիայի ու կալվածատիրության միջև առաջացած հակասությունների պարատ հողում ծիլեր են արձակում: Յեվ յեթե 80-ական, 90-ական և նույնիսկ 900-ական թվականներին ցարական ինքնակալության անհրաժեշտ էր միայն չոր պահել ազգային թրչս նամանքի վառողը, Կովկասն իր ձեռ-

*) «Ленинский сборник», т. VII, стр. 114 (ընդունված է Վ. Պ.)

ընդամենը պահելու համար, ապա 1905 թ. բանվորագլուխական շարժումների բռնկման շրջանում, վախեցած հեղափոխության վտանգից, նա բացահայտորեն գործի դրեց իր այդ զենքը, կաղճակեցավորով ամբողջ աշխարհին հայտնի 1905-6 թ.թ. հայ - թուրքական կոտորածները, ձգտելով իր համար կոտորածները դասակարգել Փրոստը վերածել ազգային Փրոստի և արհեստական անողորմ կերպով հաշիվ տեսնել հեղափոխության մեկուսացած ուժերի հետ: Ժողովուրդները բանտ՝ ցարական Ռուսաստանում տնտեսական-քաղաքական ճնշման, այսպիսով, ալիքանում էր նաև ազգային ճնշումը: Յեզ աղ-պես. յերկար տարիների ընթացքում Անդրկովկասի բանվորներին ու գյուղացիներին, կայսրության մեջ մըտնող մյուս մանր ազգություններին աշխատավորության հետ, ռեակցիայի կառավարությունը յեռակի մնշման տնտեսական-քաղաքական և ազգային մնշման լծի տակ էր պահում, ենգելի պատկերավոր խոսքերով արտահայտած՝ նա տեր էր «վիթխարի քանակի գողացած սեփականության (այսինքն հարստահարված ազգերի), վոր ստիպված պիտի լինեք յետ տալ հաշվեհարդարի արը»:

Ընդ. Ստալինը խոսելով ցարիզմի ազդեցության քաղաքականության մասին, գրում է.

«...Յարական Ռուսաստանը և՛ կապիտալիստական, և՛ գաղութային, և՛ զինվորական վոչ մարդկային ու բարբարոսական ձեռքի ճնշման ոչախ էր: Ռժ հայտնի է, վոր Ռուսաստանում կապիտալի ամենակարողությունը ձուլվում էր ցարիզմի դեսպոտիզմի հետ, ռուսական նացիոնալիզմի ազդեցիվ քաղաքականությունը՝ ցարի դահճային վերաբերմունքի հետ դեպի վոչ-ռուս ժողովուրդները... Լենինն իրավացի յեր՝ ասելով, թե «ցարիզմը ռազմա-Ֆեոդալական իմպերիալիզմ է»: Յարիզմն իմպերիալիզմի քառակուսի աստիճան բարձրացրած ամենաքաղաքական կողմերի կենտրոնացումն էր»*):

*) Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 11, 1932 թ.

Յարիզմի տապալումից և նույնիսկ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո անգամ, ինչպես հայտնի է, Անդրկովկասում չվերացավ ազգային անտաղանդը: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասի իշխող կուսակցությունները՝ մենչևիկները, մուսավաթականներն ու դաշնակցականները գերադասելով գերմանո-տաճկական լուծը, 1918 թ. ապրիլի 9-ի իրենց վորոշումով, հակառակ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեյջանի բանվորների և գյուղացիների կամքի ու ցանկության, Անդրկովկասն անջատ հայտարարեցին հեղափոխական Ռուսաստանից: Ավելին՝ իմպերիալիստական տերերի թելադրությամբ և աջակցությամբ նրանք ձեռնամուխ յեղան Անդրկովկասի հակախորհրդային ուժերի կոնսոլիդացիային, այսպես կոչված «Կովկասյան Ֆեդերացիա» կազմակերպելու գործին: Դաշնակցականների կովկասյան Ֆեդերացիայի գաղափարը թելադրվում էր Անտանտի իմպերիալիստական պետությունների կողմից, վորն իրեն ժամանակավոր քաղաքական պայքարի զենք, ուղղված էր Հոկտեմբերյան հեղափոխության դեմ: Այդ էր բղխում (և էր և՛ կարող) Անդրկովկասի աշխատավորության շահերից, ուղղված էր և նրա դեմ:

«Կովկասյան Ֆեդերացիա մը կազմելու գաղափարը իր կողմնակիցներն ունի 1917-ի Հոկտեմբերյան հեղափոխությունեն ի վեր: Այդ Ֆեդերացիայի գաղափարը ջատագովված էր Անտանտայի քաղաքական և զինվորական արտակարգ ղեկավարի կողմից: Մեծ պետություններու Կովկասի վրա մանդատ վերցնելու տրամադրությունը ևս ողնեց այդ գաղափարի ժողովրդականացմանը (! Վ. Պ.): Ամերիկայի քաղաքական և զինվորական առաքելությունն էր, վորն առաջին անգամ հղացավ այս գաղափարը, յերբ Ամերիկայի Հայաստանի մանդատը վերցնելու հարցը կար հրապարակի վրա»*):

*) Վերցված է ՀՍՍՀ Հեղինակի արտաքին ինֆորմացիոն-քաղաքական բաժնի բյուլեն.

Պարզ և ասված. «Կովկասյան Ֆեդերացիա» վոչ թե ներքին ազգային համերաշխություն ու համագործակցություն ստեղծելու նպատակով, այլ Հոկտեմբերյան հեղափոխության, բոլշևիզմի դեմ պայքարելու համար: Այլ կերպ էլ լինելու կարող: Հետագայում ևս փորձերն արվում կովկասյան պետությունների միասնական ճակատ— «Կովկասյան պետությունների լիգա» ստեղծելու համար: Այս առնչությամբ Փարիզի «Թան» թերթը գրում է. «Այս չորս պետությունները՝ Վրաստան, Ադրբեյջան, Դաղստան և Հայաստան՝ ունեն միևնույն շահերը և միևնույն վտանգները. յուրաքանչյուրն ինքնուրույն շատ տկար է դիմադրելու վտանգները և ապահովելու իր շահերը. բայց կոմերիցիան մը, յեթ լավ կառավարվի, հարգանքի արժանի պիտի ըլլա»*):

Դժվար է ըմբռնել, վոր տվյալ դեպքում «Թան»-ին զբաղեցնողը կովկասյան պետություններին միացյալ ուժերով բոլշևիզմի դեմ հանելն էր և վոչ թե նրանց ներքին պառակտումներին վերջ տալը: Պատմության ամբողջ փորձով հաստատված է, վոր իմպերիալիզմը մանր ժողովուրդների ու ազգությունների հանդեպ միայն մի քաղաքականություն ունի— դա բաժանելը և տերիթր քաղաքականությունն է: Փորձը ցույց տվեց, վոր կովկասյան «լիգայի» կամ «Ֆեդերացիայի» բուրժուական գաղափարն անպետք էր և անիրագործելի: Դաշնակցականները, մենչևիկներն ու մուսավաթականները չկարողացան և չէին և՛ կարող հաշտ ու համերաշխ ստանալ: Մի քանի ամիս իրար բղկելով, այսպես կոչված Անդրկովկասյան Սեյմում նրանք քաղաքացիներ իրենց անխառնակ գոյությունը, մենչև վոր 1918 թ. մայիսի վերջերին իրենց հայտարարեցին Սեյմից հեռացած և կաղճակեցին «անկախ» հանրապետություններ: Յրվեց Ան-

տաներից, վորն արտասպել է «Յերիք» թերթից:

*) Նույն տեղը:

զերկովկասի ռեակցիայի բույնը, բայց չվերացավ ռեակցիան:

Անդրկովկասի նորաթուխ ազգային «անկախ» հանրապետություններն իրենց գոյության հենց առաջին օրից դարձան գերմանո-թուրքական, իսկ հետագայում անդլիական-Ֆրանսիական, իտալական, ամերիկյան իմպերիալիզմի գործիք: Անդրկովկասում սկսվեց դժոխային կացություն: Ազգային կապիտալը «դեմոկրատական», «անկախ» հանրապետությունների տնտեսական-քաղաքական կյանքի ինքնիշխան տերը դարձավ: Սկսվեցին արյունոտ սահմանավեճեր: Գրեգոր Արմրուսու և ճավախական, նացիոնալիստական ինտելիգենցիայի ու մամուլի բանավեճերն ու թունոտ պայքարը տեղի տվին ազգային ռեգուլյար զորամասերի դիմում ընդհարումներին: «Սոցիալիստ»

մենչևիկները, դաշնակցականներն ու մուսավաթականները նոր Բալկանների վերածեցին Անդրկովկասը: Լուսին, Չանգեղուրը, Դարբասը, Նախիջևանը և այլ շրջաններ վերածվեցին ազգամիջյան արյունահեղ ջարդերի թատերաբեմի: Ազգային թշնամանքն ու հայածանքները լայն ծավալ ստացան: Մենչևիկյան «դեմոկրատիայի» մայրաքաղաքում, վորտեղից լայնահաղորդ ուղիով միջոցով յեվրոպական հասարակության առաջ Ս. Ինտերնացիոնալ ձեր գայելը կաուցվին, Վանդերվելեն, Ռենդելը փառաբանում էին գերմանական իմպերիալիստների պարզեմատրությունը արժանացած Ժողանիայի, Ռամիշվիլու, Չխենկելու սեռոգծած կարգերը, համարելով այն սոցիալիզմի լավագույն ուղի, ծայր առան աշխատիչներին— հայերի մասսայական շուրջակները և բալկանյան այլ վայրերում ոսերի բառնի կոտորածները: «Յես Բուլի» եմ տալիս ինձ վնասակարեմ պնդելու, վոր նույնիսկ ռուսական միապետության ամենամոռայ շրջանում վոչ մի ազգություն չի յեթարկվի այնպիսի հալածանքների ու գործումների, վորպիսի կրեցին հայերը վրաստանի մայրաքաղաքում, վերսեղ իբր քե անխախտ եմ մնա-

ցել ունակամ հեղափոխութեան բոլոր նվաճումները, յեթե հավատարմիք քան ինքնագոյն մարդկանց պընդունմանը»^{*)}։ Ահա այսպես է գնահատում Կառուցիկու փառաբանած դեմոկրատական կարգերի աղդային քաղաքականութիւնն այդ «դեմոկրատիայի» գեղարար Նոյ Ժորճանիային ուղղած իր բաց նամակում, համեմատելով դեպք միջ թուլչեմիկ Արշակ Զոհրաբյանը։ Բայց խնդիրը սրանով չէր սահմանափակվում։ Հայ և վրացի կապիտալիստների ու կալվածատերերի շահերի բաղխման պատճառները շատ ավելի բազմազան էին ու բարդ, քան համախառն պատկերացումն է։ Վրաստանում կա հաւանայկական նացիոնալիզմ — ասում է ընդհ. Ստալինը, վորովհետեւ այնտեղ դեռ կա հայկական խոշոր բուրժուազիա, վոր հաղթելով վրացական մանր, դեռ չամրացած բուրժուազիային, վերջինիս հրում է դեպի հաւանայկական նացիոնալիզմ^{**)։}

Հայ բուրժուազիայի տիրապետող դիրքն Անդրկովկասի տնտեսական վարչական կենտրոններում, հայկական կապիտալի ուժեղացումը Վրաստանի և Ադրբեյջանի տերրիտորիաներում, անպայմանորեն այդ վայրերում պետք է ծներ հակահայկական նացիոնալիզմ, վորովհետեւ հայ բուրժուազիան ինչքան ավելի յեր ամրապնդւում իր տնտեսական — քաղաքական դիրքերը, այնքան ավելի նա ազդեցիկ էր դառնում՝ ձգտելով միջ միայն իր վերջին մեծ առնել վորջ Անդրկովկասը, այլև, հետագայում տերրիտորիալ վորոշ գրավումներ կատարել։ Այնպես վոր պատահական չէ, յերբ վրացական նացիոնալիստների որդան «Կլեկ» լրագիրն իր ժամանակին, փրփուրը բերանին աղմկում էր, ասելով — կամ Թիֆլիսը թողնենք հայերին և մեր մայրաքաղաքը փոխադրենք Քութայիս, կամ քչենք հայերին Թիֆլիսից և լցնենք Սեւանի լիճը։

^{*)} «Մշակ», 1919 թ., 7 հունվարի։

^{**)} И. Сталин. «Марксизм и национально-колониальный вопрос», Москва, 1934 г., стр. 12.

Աղդային բուրժուական հանրապետութիւնների կազմավորումից հետո, հայ-վրացական անտադոնիզմը, ինչպես հայտնի յե, հանգեց աղգամիջյան պատերազմների՝ յերկու հարևան ժողովուրդների միջև, և յերկուսն էլ 1918 թ. մինչև խորհրդայնացումը գրեթե պատերազմող կողմեր մնացին։ Ի դեպ, այս չէր խանգարում (և չխանգարեց) ինչպես դաշնակցականներին, նույնպես և մենչեւիկներին, յերկուսն էլ հավատարմապես սպառնացող հեղափոխութեան դեմ պայքարելու նպատակով, «գեմի» յեղբայրացման» փորձեր կատարել։ «Ձեռքի յեղբայրացման» հարցն ավելի քան սուր կերպով դրվեց 1920 թ. Բաղվի ապրիլյան հեղաշրջումից և Հայաստանի մայիսյան հերոսական ապստամբութիւնից հետո, յերբ Ադրբեյջանում ընկել էր մոսկովաթականների դիկտատուրան, իսկ Վրաստանում և Հայաստանում հալած էին դաշնակցականներին ու մենչեւիկներին տիրապետութեան որերը։ Յեւ թող զարմանալի չլինի, վոր այս անգամ հայ-վրացական բանակցութիւնների ձեռներեցութիւնն իր վրայ յե վերցնում Դաշնակցութիւնը։ Նրան այդ թելադրում էր յերկրի արտաքին և ներքին յերերուն Կադուութիւնը, և այդ շատ լավ հասկանում ու ոգտագործում էին մենչեւիկյան գերմանադեմոկրատները։ 1920 թ. մայիսի 19-ին դաշնակցական կառավարութեան վարչապետ և արտաքին գործերի մինիստր Համո Ոհանջանյանը խիստ զաղտնի մի գրութեամբ հայտնում է Թիֆլիսի գերմանադիտական ներկայացուցիչ Տիգրան Բեգդադյանին, վոր «Վրաստանի հետ զինվորական գործողութիւնները կորդիի մագիայի յեմքարկելու և զինվորական դաշինք կնքելու հարցը խորապես հետաքրքրում է կառավարութեանը»^{*)} և հրահանգում է արագացնել այդ հարցի լուծումը։

Հայ-վրացական կոնֆերանսի պատգամավորութեան անգամ Ստ. Մամիկոնյանը, մայիսի 20-ին, մինիստր-

^{*)} Պետական կենտրոնական արխիւ, ԱԳՄ. Գ. 861. թ. 56։

նախագահին գրած իր ինֆորմացիայի մեջ վրացիների հետ ունեցած խորհրդակցութեան մասին գրում է՝ «Անցեմ (վրացական պատմիրական թիւնը. Վ. Պ.), վոր յերբեք հայ կառավարութեան վարիչ շրջանների և կառավարչական տրամադրութիւններն այն աստիճան մերձեցման կողմ չեն յեղել, ինչպես ներկա թույլին. ՍՄԵՆ ԲԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ Ե ՄԵՐ ՄԵՋ՝ և՛ զինակցութիւն, և՛ սահմանափակ, և՛ լայն փաղափակ համաձայնութիւն»^{*)}։

Դաշնակցական կառավարութեան ղեկավար շրջանների և նրանց կարծամիտ ղեկավարների խուճապն ու «յեղբայրացման» արտասուր ձգտումը չէր դաշնակցեցնում մենչեւիկյան կառավարութեանը։ Ընդհանուր համաձայնութեան գալով զինվորական գործողութիւնների կորդիիացիայի, տրանզիտի, ռազմամթերքների փոխանակութեան խնդրում, նրանք ամենախիստ կերպով առարկում են Հայաստանի պատմիրակութեան — «ամեն մի հայ, վոր տեղ էլ եւ ինչի հաշվում է Հայաստանի հպատակ» առաջարկին, պատճառաբանելով, թե հայկական պատմիրակութեանը կամ պետք է ընդհանրի, վոր մի վորք պետութեան մեջ 25 տոկոս ոտարահպատակ լինել չի կարող, կամ հակառակ դեպքում Թիֆլիսի, Բորչալի, Ախալքալաքի, Սըղնախի, Թելաքի, Կախեթ-Դուշեթի Հայաստանի հպատակները պետք է թողնեն Վրաստանի սահմանները, իրենց տերրիտորիան հաշվելով Ալյահ-վերդուց մինչև Սև ծով։ Համաձայնութեան յեղը չգտնելով հպատակութեան և սահմանափակների հարցում, կոնֆերանսը ձգձգում է։ Հուլիսի 12-ին, յերբ արդեն մայիսյան շարժումները յերկրի ներսում ճնշված էին, արտակարգ դատարաններն ու մարտիկներն տերրիտորիան անողորհաչելով էին տեսնում հեղափոխականների հետ, և Դաշնակցութիւնն իրեն, այսպես թե այնպես, ամուր երգում, Համո Ոհանջանյանը, հակա-

^{*)} Պետական կենտրոնական արխիւ, ԱԳՄ. Գ. 861, թ. 66։

ռակ մայիսին ցուցաբերած իր աճապարանքի, հայ-վրացական կոնֆերանսի Հայաստանի պատմիրակութեան նախագահին հայտնում է հետևյալը։

«Մտացանք վրացիների ներկայացրած նոր ծրագիրը սահմանների մասին։ Կառավարութիւնը հասկանում է, վոր դա սակարկութեան մի ձև է և, իհարկէ, մենք եւ պիտի ներկայացնենք նույնպիսի մի ծրագիր, ընդունելով մեր սահմանը մինչև Սրամ գետը, ամբողջ Ախալքալաքը, Արդահանի ամբողջ շրջանը և Բաթումի մի մասը, ձորովի հովիտը, բայց այդպիսի ծրագիր առաջարկելուց առաջ, ցանկալի յե, վոր Փոթիի ամբողջ ռազմամթերքն անցած լինի Հայաստան, ուստի կառավարութիւնը վորոշեց ձգձգել այդ հարցը 2—3 շաբաթ և խնդրել ձեռ մեկնել Յերբ վան զեկուցում տալու և նոր հրահանգներ ստանալու համար։ Ձեր Յերբ վան մեկնելը վրացիների համար պիտի լինի արդարացում գործը հետաձգելու համար»^{*)}։

Բերված որինակներն ինչին արդեն ցույց են տալիս, վոր բուրժուական, նացիոնալիստական կուսակցութիւնների տիրապետութեան շրջանում աղդային-տերրիտորիալ հարցերի լուծման մասին խոսք անգամ չլինել չէր կարող, վոր պատմական վորոշ պայմաններում դաշնակցականների առաջադրած զենքի յեղբայրացումը մի ռազմարեմում, հենց նույն դաշնակցականների կողմից այլ պայմաններում վեր եր ամվում զենքի կռիւ։

Յեւ այսպես կռվում էին Հայ, վրացի, թուրք կապիտալիստներն ու կալվածատերերը, բայց տուժում էր բանվորն ու զյուղացին։ Վորպես լյուստրացիա, ավելորդ չենք համարում նշել հետեւյալ փաստը. «Ս. թ. նոյեմբերի կեսերին վրացիք բռնի կերպով ներխուժեցին Չղոք Չոսա, վոր միայն չհարցնելով այդ Չոսայի բնակչութեան համաձայնութեանը, այլև չնախադրուցաբերին այդ մա-

^{*)} Պետական կենտրոնական արխիւ, ԱԳՄ. Գ. 861, թ. 94։

սին: Վրացական դեմոկրատական հանրապետությունը, մոռացած աղբերին ինքնորոշման իր դեմքը, ձգտում է միայն իր ճանկերի մեջ առնել այն համեղ պատուը, վոր մինչև այժմ յեղել է վիճելի: Վրացիներն իրենց ձեռքն առնելով Չեզոք Չոնան, ստեղծեցին այնտեղ կանոնավոր գինավորական ուժեր «սահմանները պահպանելու համար», սկսեցին պահանջել կենսամթերքներ, ինչպես, որինակ, խոտ, վարսակ, կարտոֆիլ և այլն, բոլորովին հաշվի չառնելով թե քաղաքացիների մոտ դրանք կան, թե վոչ: Չեզոք Չոնայի քաղաքացիները խնդրում են աղատել կամ կրճատել այդ պահանջները, սակայն վրացական իշխանությունը առ վոչինչ համարելով այդ, ստիպում է «ձեռք և տալ»: Պրիվոնոյե գյուղի քաղաքացիները իրենց հաշվում են խորհրդային Ռուսաստանի հայտնականներ և իրենց վրա յեն թողնում ինքնորոշման իրավունքն ու իրենց համարում են ձնշվածներ: Բողոքում են Չեզոք Չոնան վրացիների կողմից ապրիլին գրավելու դեմ, խնդրում ենք խորհրդային Հայաստանի դորքերին՝ պաշտպանել Չեզոք Չոնան, մասնավորապես Պրիվոնոյե, թեթեւացներու և յեթե կարելի յե վերացներու վրացական (իմա մենչեիկյան, Վ.Պ.) լուծը»^{*)}:

Աղբերի ինքնորոշման, դեմոկրատիայի անունից խոսող վրացական մենչեիկները, իրենց պետական կուսակցությունը յեղած ժամանակ անց ելին կացնում խիստ աղքատական ու ակցիոն քաղաքականություն, աղբերին ինքնորոշման քողի տակ այլազգիների պաղտմաների քաղաքականություն: Դրանով վրացական մենչեիկները ցույց տվեցին, թե ի՞նչ է նաշնակում, յերբ բնդհանրապես մենչեիկներն անցնում են պետական իշխանություն գլուխ:

Մենչեիկներին վոչնչով հետ չեկին մնում նաև հայ դաշնակցականները:

^{*)} Պետական կենտրոնական արխիվ. ՀՍՍՀ Արտ. Գործադիր կոմիտե, Գ. 114, Թ. 32—34 (Հայ. Հեղկոմին ուղղած Պրիվոնոյե գյուղացիների 1920 թ. դեկտեմբեր 15-ի համախոսականից):

Սրանք ևս իրենց ծրագրում և վորոշումներում մենչեիկներին վոչ պակաս սակեկության յեկն յենթադրում աղբերի ինքնորոշման լուրջ և թղթի վրա անցկացնելով «Ազգային ինքնորոշման իրավունք, կատարյալ հավասարություն բոլոր ազգերին», իսկ գործնականում կիրառում ելին մոլի աղքատական-չովինիստական քաղաքականություն: Հիրավի չարժի յեկ յերկար կանգ առնել դաշնակցականների այդորինակ քաղաքականություն վրա, այնքան, վորքան նրանք ևս իրենց տիրապետության շրջանում մինչև վերջ մերկացրին իրենց բուրժուա-նացիոնալիստական դեմքը, սխտեմատիկ հալածանքի յենթադրելով այլազգի աշխատավորներին մաքրելով թուրք տարրերից Չանգիլ-բասարի, Վեդիբասարի, Շարուր-Դաբալադյաղի ամբողջական շրջանները և բազմաթիվ այլ գյուղեր ու ավաններ՝ թալանի ու բնաջնջման յենթադրելով նրանց:

Մուսավաթականները, թուրք բեկերն ու աղալարներն ևլ իրենց ձեռով ելին լուծում աղքատի հարցը, արյան բաղնիքներ կազմակերպելով այլազգիների՝ հայերի համար: «Նուխու և Արեւի շրջանների ամբողջ հայ աղալարնալությունը վերջնականորեն բնաջնջված է—դրում և Նուխու շրջանի Կուտաշեն գյուղի թուրք բնակիչներին մեկը,— նրանց մեծ մասը սրի յե մատնված, գյուղերն այրված: Մինչև վերջին որերը 31 գյուղերից միայն 3 ելին մնացել կիսավայր՝ Նիժը, Վարդաշենը և Ջալեթը, վորոնք իբրեւ դերիններ ապրում ելին իրենց տեղերում, սակայն նրանց չվիճակվեց շարունակել իրենց գոյությունը և Ղարաբաղի դեպքերի հենց առաջին որերին հարձակման յենթադրվեցին և Վարդաշենի ու Ջալեթի բնակիչները գլխովին կոտորվեցին, իսկ Նիժայի բնակիչների մի մասը պատասխարվեցին անտառներում, վորտեղ և մինչ որս քարչ են տալիս իրենց խլճուկ գոյությունը... կոտորածների Աղալարնալիցները տեղական բեգերն ելին, գլուխակամ կուլակները և վարչական իշխանությունը: Հայերից կուղտված գույքի մեծ մասը ձուռ-

կեցին բեկերն ու իշխանությունը: Այդ դեպքերի շնորհիվ, բեկերը, չնայած իրենց վոչնչի վոչությունը, նախան ստրաժնիկներից չատերը դարձան խոշոր միլիոնատերեր»^{*)}:

Դաշնակցականների ու մուսավաթականների վարած աղալարնալ քաղաքականությունը միաժամանակ այն կործանարար հետևանքն ունեցավ, վոր տնտեսապես այնքան սերտ կերպով միմյանց հետ կապված հայ թուրք բնակիչներին վզին բռնի կերպով վաթաթեցին նաև տնտեսական բոլիտի քաղաքականությունը: Այս տեսակետից բնորոշ է Չանգիլ-բասարի կենտրոնական աղալարնալ խորհրդի դեներալ-մայոր Անդրանիկ ստորադրումը 1919 թ. հունվարի 22-ին Սիսյանի, Ղաթանի և բուն Ջալեթ-դուրի հայություն տված հրամանը—

«Վոչ մի հայ իրավունք չունի արտահանել և ծախել հարեան թուրքերին և կամ Շուշի տանել մասցու տավար, վոչխար, խոզ, ձի, ցորեն, դարի, կարտոֆիլ և այլ կենսական անհրաժեշտ մթերքներ»:

Հրահանգս չստացիները յենթադրվելու յեն յերեք տարի բանտարկություն:

Ծախելու համար տարվող և բունված ամեն տեսակի մթերքները դրավ վելու յեն»^{**)}:

Յեվ այսպես, աղքատի բուրժուազիան խորություն չդնելով միջոցների մեջ, ամենուրեք նացիոնալիստական թույն եր ներարկում Անդրկովկասի աշխատավորության յերակներում, տնտեսապես-քաղաքականապես-կուլտուրապես դարերով միմյանց հետ կապված հարեաններին թշնամի դարձնում:

Իսկ թե ի՞նչ եր յեռալ մուսավաթի այդորինակ քաղաքականություն հետևանքը, մեկ պարզ պատկերացում է տալիս ստորև բերված նամակը, վորը նույնությամբ վերց-

նում ենք 1918 թ. «Մշակ» լրագրից: «Իմ դեղեցիկ հայրենիք՝ Ջավախքն ամայնացած է: Թուրքերը կամ կոտորված են կամ վախած դեպի Չըղզըր, իսկ հայերը և վրացիք տառապում են անտառներում ու սարերում: Թե թուրք, թե հայ գյուղացիության կրած տանջանքներն անսահման, աննկարագրելի յեն: Հարյուրավոր անմեղ մարդիկ կոտորված են, հարյուրավոր կանայք բռնաբարված, ամբողջ գյուղերը թալանված, այրված, քանդված: 80 հազար հայ գյուղացիությունը չի կարող վոչ առաջ շարժվել, վոչ վերադառնալ իրենց գյուղերը: Նրանք թողին Ջավախքում միլիոնավոր վուլթ ցորեն և դարի, չնչին դներով ծախում են իրենց անասունները, քայքայվում: Դրությունը սարսափելի յե: Ո՞վ է մեղավոր, ո՞վ ստեղծեց այս սարսափներն ու տանջանքները, ո՞վ հրդեհեց խաղաղ գավառը. մոտ հարյուր տարի թուրք և հայ գյուղացիներն ապրում ելին կողք կողքի, հանգիստ, խաղաղ թուրքն ևլ, հայն ևլ խաղաղ, խեղճ յերկրագործ ելին: Յեա մեղադրում եմ Ախալբալակի քաղաքագլուխ և տեղական աղալարնալ խորհրդի նախագահ՝ Մ. Մարգարյանին, վոր նա միանալով դաշնակցական «հերոս» Ուսուլ Նաչոյի հետ, մաքրեց Կովկաս թուրք գյուղը: Տեղական աղալարնալ խորհուրդը հետևելով Մ. Մարգարյանին և մյուս դաշնակցականներին, զինեց խուժանը, ավեց նրան փամփուշտ և թուփ և ուղարկեց Կովկաս թուրք գյուղի դեմ, վոր պահում եր իրեն խաղաղ և լույսը:

Կովկասի մաքրեցին, գյուղը վառեցին: Տեղական դաշնակցականները և խուժանը չեկին թաղանթում իրենց ուրախությունը: Նրանց համար այդ որերը հաղթության որեր ելին: Կովկասի մաքրելով, դաշնակցականները և Աղալարնալ խորհուրդը կատարեցին մի վերին աստիճանի քստմանի և անուղղելի գործ: Նրանք Ջավախքը հրդեհեցին, ամբողջ յերկիրն ամայացրին: Ութսուն հազար գյուղացիությունը տառապում է, մաշվում ձորերում և անտառներում, ձյան ու անձրևի տակ: Մինչև յերբ նա պի-

^{*)} Պետական կենտրոնական արխիվ ԱԳՄ. Գ. 806, Թ. 18—19:

^{**)} Պետ. կենտ. արխիվ, ՀՍՍՀ Արտգործ-ժողովմատի քաղաքական բաժնի ինֆորմացիոն յենթաբաժին, Գ. 170, Թ. 22:

տի տանջման, յե՛րբ մենք կազա-
վենք այդ ազգային խուլիզաններից
և կկարողանանք հանդիստ ապրել»:
Դաշնակցականների, մենչևիկների
ու մուսավաթականների դատակար-
գային-ազգային քաղաքականության
հետևանքով Անդրկովկասի բազմա-
թիվ վայրերի աշխատավորները
Ջավախքի միճակին արժանացան:
Հայ, վրացի, թուրք բուրժուանե-
րն ու կալվածատերերն իրենց դա-
տակարգային գործը ցուցադրելով
իրեն համադրային գործ, իրենց սե-
փական շահերն սքողելով ընդհանուր
ազգային շահի դիմակի տակ, հաջո-
ղեցրին ազգային կապիտալի մրցու-
թյանն ու պայքարին համազգային
կռիվ բնույթ տալ, այդ ջրապտույ-
տի մեջ առնել նաև զգալի թվով
բանվորների ու գյուղացիների: Այդ-
պիսով մենչևիկները, դաշնակցական-
ներն ու մուսավաթականները կիսով
չափ հասան իրենց նպատակին ի-
րար դեմ լարելով տարբեր ազգու-
թյունների բանվորներին ու գյուղա-
ցիներին, թուլացնելով բուրժուա-
կալվածատիրական կարգերի դեմ
ուղղված հեղափոխական ինտերնա-
ցիոնալ պայքարի ֆրոնտն Անդրկով-
կասում:

Ընկ. Ստալինը, 1921 թվին, Թիֆ-
լիսում, կոմկուսի քաղաքային կազ-
մակերպության ընդհանուր ժողո-
վում, «Կոմունիզմի հեքթակամ խըն-
դիրների վերաբերյալ վրաստանում
և Անդրկովկասում» վերադասարկու-
նը կրող իր գեկուցման մեջ, անդրա-
դառնալով Անդրկովկասի այդ չըր-
ջանի ազգային փոխհարաբերության
խնդրին, հետևյալն է ասում. «Յես
հիշում եմ 1905—1917 թվականները,
յերբ Անդրկովկասի բանվորների և
ընդհանրապես աշխատավորների մեջ
նկատվում էր լիակատար յեղրայրա-
կան համերաշխություն, յերբ յեղ-
րայրական կապերը, հայ, վրացի,
ադրբեջանյան և ուրա բանվորներին
կապում էին մի սոցիալիստական
ընտանիքի մեջ: Այժմ, դալով Թիֆ-
լիս, յես ապշում եմ Անդրկովկա-
սի ազգութային բանվորների մե-
ջև վաղեմի համերաշխության բա-
ցակայությունից: Բանվորներն ու

գյուղացիներն մեջ դարձացել է նա-
ցիոնալիզմը, ուժեղացել է անվստա-
հությունը զգալու ղեպի իրենց ա-
լազդի ընկերները: Այժմ հակահայ-
կական, հակաթուրքական, հակավրա-
ցական, հակաուսական և ուրիշ ա-
մեն տեսակի նացիոնալիզմ, ինչքան
ուզեք կա: Յեղրայրական վստահու-
թյան հին կապերը կտրվել, կամ
առնվազն խիստ թուլացել են: Ինչ-
պես յերեւում է նացիոնալիստական
կառավարությունների գոյության յե-
րեք տարին վրաստանում (մենչևիկ-
ները), Ադրբեջանում (մուսավաթիստ
ները), Հայաստանում (դաշնակցիները)
գուր չեն անցել: Այդ նացիոնալիս-
տական կառավարությունները մղե-
լով իրենց ազգային քաղաքականու-
թյունը, աշխատավորների մեջ գոր-
ծելով ազդեցիկ նացիոնալիզմի վո-
լով, վերջապես այն աստիճանի հա-
սան, վոր այդ փոքր յերկրներից
յուրաքանչյուրը չըջապատված էր
թշնամի նացիոնալիստական միջա-
վայրի ողակով, վորը զրկում էր
վրաստանը և Հայաստանը ուսական
հացից և ադրբեջանյան նավթից, իսկ
Ադրբեջանը և Ռուսաստանը՝ Բա-
թումի վրայով ստացվող ապրանք-
ներից: Յես էլ չեմ խոսում զինված
ընդհարումների (հայ-վրացական պա-
տերազմը) և կոտորածի (հայ-թուր-
քական) մասին, իրեկ ազգայնական
քաղաքականության արդյունքների
մասին: Չարմանալի չէ, վոր այդ
թուևոտ ազգայնական պայմաններում
կտրվել են հին ինտերնացիոնալ
կապերը, իսկ բանվորների գիտակ-
ցությունը թուլամղվել է նացիոնա-
լիզմի թուլյում: Յեմ քանի դեռ նա-
ցիոնալիզմի մնացորդները բանվոր-
ների մեջ չեն վերացել, այդ հանդա-
մանքը (նացիոնալիզմը) մեծազույն
խոչընդոտ է հանդիսանում Անդրկով-
կասյան խորհրդային հանրապետու-
թյունների տնտեսական և ռազմական
ջանքերի միավորման գործում»:

Այսպես եր ահա, ազգային փոխ-
հարաբերությունների միճակը, յերբ
մեկը մյուսի հետևից, 1920 թվի
ապրիլի 28-ին Ադրբեջանում, 1920
թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում,
և 1921 թվի փետրվարի 25-ին վրաս-

տանում ապստամբ բանվորներն ու
գյուղացիները կոմունիստական կու-
սակցության ղեկավարությամբ, հե-
ղափոխական ճանապարհով տապալե-
ցին դաշնակցականների, մենչևիկե-
րների ու մուսավաթականների բուր-
ժուա-կալվածատիրական կարգերը և
ստեղծեցին բանվորա-գյուղացիական
խորհուրդների իշխանություն:

* * *

Պրոլետարական հեղափոխության
հաղթանակից անմիջապես հետո Ան-
դրկովկասի կոմունիստական կազ-
մակերպությունների առաջ ծառա-
ցավ պատմական ավելի քան բարդ
ու դժվարին խնդիր—Անդրկովկասի
բազմազգի գյուղացիական յերկրում,
դաշնակցականներից, մենչևիկներից
և մուսավաթականներից «ժառան-
դած» տնտեսական քայքայվածու-
թյան, ավերի, ազգային բորբոքված
կրքերի, վորբերի ու անապաստանե-
րի յերկրում խորհրդային իշխանու-
թյունն ամրապնդելու խնդիրը:

«Իշխանության գրավումը — դա
միայն այդ գործի սկիզբն է, — ասում
է ընկ. Ստալինը: Մի յերկրում տա-
պալված բուրժուազիան շատ պատ-
ճառների հետևանքով դեռ յերկար
ժամանակ մնում է ավելի ուժեղ,
քան նրան տապալած պրոլետարիա-
տը: Ուստի է ամրողջ խնդրի ելու-
թյունն այն է, վոր պետք է պահ-
պանել իշխանությունը, ամրապնդել
այն, դարձնել այն անպարտելի: Ի՞նչ
պետք է անել այդ նպատակին հաս-
նելու համար: Դրա համար սնհրա-
ժեշտ է առնվազն յերեք զլխավոր
խնդիր իրագործել, վորոնք ծառա-
նում են պրոլետարիատի ղեկատուու-
րայի առջև, նրա հաղթանակի «հա-
ջորդ որը»:

ա) տապալված և հեղափոխության
կողմից եքսպրոպրիացիայի յենթարկ
ված կալվածատերերի և կապիտա-
լիստների դեմադրությունը Վրոտել,
լիկվիդացիայի յենթարկել նրանց ա-
մեն մի ջանք, ամեն փորձ՝ վերա-
կանգնելու կապիտալի իշխանու-
թյունը:

բ) չինարարությունը կազմակեր-

պել այնպես, վոր բոլոր աշխատա-
վորները համախմբվեն պրոլետարիա-
տի շուրջը, և այդ աշխատանքը տա-
նել դասակարգերի վոչնչացումը,
լիկվիդացիան նախապատրաստող ու-
ղիով:

դ) զինել հեղափոխությունը, կազ-
մակերպել հեղափոխության բանակը՝
լիկվիդացիայի, արտաքին թշնամիներ-
ի դեմ պայքարելու համար»^{*)}:

Անդրկովկասի կոմունիստներն այս
բոլոր ուղղություններով էլ ձեռնա-
մուխ յեղան մեծ դժվարությունե-
րով ձեռք բերված պրոլետարիատի
ղեկատուության ամրացման գործին:
Նրանք իրենց ուսերի վրա հերոսա-
բար կրեցին Անդրկովկասի նման մի
յերկրում խորհրդային իշխանու-
թյուն կառուցելու վողջ ծանրու-
թյունը: Չպետք է մոռանալ, վոր ի
տարբերություն խորհրդային Ռու-
սաստանի, պրոլետարիատի ղեկա-
տուրայի ամրացման համար Անդր-
կովկասում մեկից ավելի դժվարու-
թյուններ կային: Տնտեսական կյան-
քի ավելի քան քայքայվածությունը
մանր-բուրժուական տարրի դերա-
կըշիտ տոկոսը և ինդուստրիալ բան-
վորության սակավաթիվ լինելը —
առանձնապես Հայաստանում և մա-
սամբ վրաստանում, ազգային հա-
րապետությունների ռազմական ու-
ժի — կալմիր Բանակի ռազմա-
տեխնիկական թուլ վիճակը, ազգա-
յին հարաբերությունների արվածու-
թյան մնացորդները, խորհրդային
նորաստեղծ իշխանության մեղմ վե-
րաբերմունքի հետևանքով յերկրի
ներսում ազատ մնացած բավականա-
չափ զգալի թվով հակահեղափոխա-
կան թափվածությունների քայքայիչ աշ-
խատանքը, եմիգրացիայի և իմպե-
րիալիզմի վտանգություններն Ան-
դրկովկասի սահմանադրված և
այլն, այս բոլորն ահա, լուրջ ար-
գելքներ էին հարուցում Անդրկով-
կասում պրոլետարիատի ղեկատուու-
րան ամրացնելու գործում:

Բավական է նշել անդիական իմ-
պերիալիզմի ծրագրերը հարեան

*) Ս տ ա լ է ն. Լենինգրդի հարցերը, էջ
40, 1932 թ.

Պարսկաստանում, Թավրիզի դաշ- նակցական եմիրքանոս զինված ու- ժերի ռազմական գործողություն- ները մեր սահմանագլխում, Անդրը- կովկասը Հեղափոխական Ռուսաս- տանից անջատելու և բուրժուա-կա- վածատերական կարգերը վերականգ- նելու նպատակով Հայաստանի, Վը- րաստանի, Ադրբեջանի և Դաղստանի եմիրքացիայի 1921 թվի հունիսի 10-ին կնքած Փարիզի համաձայնա- գրերը և այլն, տեսնելու համար, թե Անդրկովկասի բոլշևիկները ներքին և արտաքին ինչպիսի ծանր պայ- մաններում պետք է իրադրվեյին ի- ռենց առաջ դրված մեծագույն այդ խնդիրների լուծումը:

Առանց չափազանցության կարելի- յե ասել, վոր այդ դժվարություն- ներն այնքան մեծ էին, վոր Անդրը- կովկասի առանձին հանրապետու- թյուններն իրենց սեփական ուժերով և նույնիսկ վորջ Անդրկովկասը մի- ախան անկարող կլինեյին հաղթել: Բայց նրանք մենակ չէին: Իմպե- ռիալիզմի ու նրա կովկասյան գոր- ծակալների դեմ մղվող կռվում Ան- դրկովկասի բանվորներին ու գյուղ- ղացիներին ոգնում էր քաղաքակա- նապետ, նյութապես և ռազմականա- պես խորհրդային Ռուսաստանը:

Անդրկովկասյան խորհրդայինների առաջին համագումարում տված իր փայլուն զեկուցման մեջ, ընկ. Որ- ջանիկիձեն ասում է. «Առանց խոր- հրդային Ռուսաստանի ողջության մի՞թե կարող էին հաղթել Ադրբե- ջանի, Վրաստանի և Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, հե- տո՞ մի՞թե առանց խորհրդային Ռուսաստանի նյութական տեխնի- կական կամրանար խորհրդային իշխանությունն այստեղ: Անցյալ տարի խորհրդային Ռուսաստանն ու- ղարկել է հաց և շաքարավար և ուղարկել նաև այս տարի: Նա վոս- կի յե տվել Մուղանի ջրային սիս- տեմը վերականգնելու համար: Այս տարի նա բաց է թողել 800-000 ռուբլի վոսկով՝ Մուղանի համար տրակտորներ գնելու, նա բաց է թո- ղել 640 հազար վոսկի ռուբլի՝ բա- րակապործությունը Հայաստանում

վերականգնելու համար, նա բաց է թողել 700 հազար վոսկի ռուբլի՝ Թիֆլիսի մոտ հիդրո-էլեկտրոկա- յան կառուցելու համար: Իսկ ան- ցյալ տարի խորհրդային Ռուսաս- տանն Ադրբեջանին, Վրաստանին և Հայաստանին բաց է թողել ավելի քան 8 միլիոն ռուբլի վոսկով»...

«Չլինեք խորհրդային Ռուսաս- տանը, չեք լինի և խորհրդային Ա- դրբեջանը, խորհրդային Վրաստա- նը և խորհրդային Հայաստանը—ա- սում է ընկ. Որջանիկիձեն, և այստե- րանի կգտնվեյին անգլիական իմ- պերիալիզմի կրկի տակ: Միայն Ռուսական բանվորներն ու գյուղա- ցիներն, Ռուսական կարմիր բանակի հետ միություն հաստատելով Ա- դրբեջանի բանվորներն ու գյուղա- ցիները, Վրաստանի բանվորներն ու գյուղացիները, Հայաստանի բան- վորներն ու գյուղացիները ձեռք բե- րեցին իրենց ազատությունը»*):

Անդրկովկասի խորհրդայնացումը, զաշնակցականների, մեկեկների, մուսալաթիստների հետ խզված կա- պերի վերականգնումն ավելի լայն դուռ է բաց անում Ռուսական պրո- լետարիատի յեղբայրական այդ ող- նությունը: Անդրկովկասի նո- րաստեղծ խորհրդային հանրապե- տությունների ամրացումն ու զար- զացումը դառնում են խորհրդային Ռուսաստանի պրոլետարիատի, Լե- նինի և Ստալինի մտահոգության ու փայլալայնի առարկան:

Կրուպսկայան պատմում է, վոր «Լենինը միշտ պահանջում էր մաքսի- մալ ուշադրություն դարձնել ազ- գային հանրապետություններում կազմված խորհրդային իշխանու- թյունների հանդեպ»**):

1921 թվի մարտի 2-ին Լենինն Որ- ջանիկիձենի անունով գրում է. «Ի- րեկտիվներ կովկասի կոմունիստնե- րին և վրացական հեղափոխական

*) «Первый Закавказский съезд Сове- тов», стр. 68-69, изд. Закавказского РКП, 1923 г., Тифлис, (ընդգծում իմն. է. Վ. Գ.)

**) Ленин. О национально-колон- нальном вопросе, ИМЭЛ, 1932 г., стр. 8. (ընդգծում իմն. է. Վ. Գ.)

կոմիտեյի անդամներին» համակը: Այս համակն Անդրկովկասի և մաս- նավորապես Վրաստանի նոր միայն իշխանություն գլուխ անցած կոմու- նիստների համար գործունեություն մի հոյակապ ծրագիր է դառնում: Լենինն այդտեղ վորջունելով Վրաս- տանի խորհրդայնացումը, գրում է.

«Առաջին. հարկավոր է անհապաղ ղեկել բանվորներին և ամենաչքա- վոր գյուղացիներին, ստեղծելով վրացական ամուր կարմիր բանակ:

Յերերորդ. անհրաժեշտ է զինված- ների հատուկ քաղաքականություն, վրացական ինտելիգենցիայի և մանր առևտրականների վերաբերմամբ: Պետք է հասկանալ, վոր վոչ միայն հաշվի չէ նրանց ազդանացները, այլև պետք է նույնիսկ վորոշ զինու- ղություններ անել, միայն թե բարե- լավվել նրանց գրությունը և հնարա- վորություն թողնել նրանց մանր ա- ռևտուր անելու»:

Նամակի վերջում Լենինն ասում է. «Խնդրում եմ հիշել, վոր Վրաս- տանի և՛ ներքին, և՛ միջազգային պայմանները վրացական կոմունիստ- ներից պահանջում են չգործադրել Ռուսական շաքարը, այլ շնորհով ու ճկունորեն ստեղծել յուրահատուկ տակտիկա՝ հիմնված մեծ զինուղ- թյան վրա, ամեն տեսակի մանր բուրժուական տարրերի հանդեպ»):

Մոտ մի ամիս հետո, 1921 թվի ապրիլի 9-ին, Լենինն Որջանիկիձե- յին ուղղած հեռագրում ասում է. «Մտացա ձեր ծածկագիրն Անդրկովկասի հուսահատական դը- րություն մասին: Մենք մի շարք մի- ջոցներ ձեռք առանք, մի քիչ վոսկի տվինք Հայաստանին, կրկնեցինք մեր ամեն տեսակ հանձնարարություննե- րը Պարթոկոմատին: Բայց պետք է նախադաշնան մի մենք այստեղ խիստ կարիքի մեջ ենք և ոգնել չենք կարողանալ: Այնուհետև Լենինն ա- սում է. «Կորակապետ պահանջում եմ ստեղծել մոնետական մարզային մի որգան ամրադ Անդրկովկասի հե- մար (ընդգծումը Լենինինն է), ամ- րադ ուժով առաջ մղել կոմ-

ցեսիաները, զարգացնել հողա- գործությունն ու անասնապահու- թյունը, ապրանքավաճառականու- թյունը Հյուսիսային կովկասի հետ» և այլն*): Իսկ դրանից հինգ որ հե- տո, Անդրկովկաս աշխատանքի ու- ղարկվող ընկ. Մյասնիկյանի հետ Լենինը «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի և լեռնա- կանների հանրապետության կոմու- նիստ ընկերներին» ուղարկած նա- մակում գրում է.—

«Բայց վարձան ել կարևոր լինի ազգային խաղաղությունը կովկասի ազգությունների բանվորների ու գյուղացիների միջև, անհավեմատ ել ավելի կարևոր է, սակայն, պահպանել ու զարգացնել խորհրդա- յին իշխանությունն իրքև անցում դեպի սոցիալիզմ: Այդ խնդիրը դժվա- րին է, բայց միանգամայն իրադո- ռելի: Դրա հաջող լուծման համար ավելի կարևոր է, վորպեսզի Անդրկով- կասի կոմունիստներն ըմբռնեն իրենց դրությամբ, իրենց հանրապետությու- նների դրությամբ յուրահատկությու- նը, վոր տարբերվում է ՌՍՖՍՀ-ի դրությունից ու պայմաններից, ըմ- բռնեն մեր տակտիկան նույնու- թյամբ չընդորիմակելու, այլ մտած- ված կերպով այն ձևափոխելու ան- կրածեշտությամբ, հարմարեցնելով կոմկրետ պայմանների տարբերու- թյանը»**):

«Վոչ քե ընդորիմակել մեր տակ- տիկան,— շարունակում է Լենինը,— այլ իմեմուրայն կերպով կշաղատել նրա յուրահատկության պատճառնե- րը, նրա պայմաններն ու արդյունք- ները, կիրառել ձեզ մոտ 1917—1921 թվի փորձի վոչ քե տառը, այլ վո- գին, իմաստը, դասերը***)» Այնու- հետև Լենինը նշելով կովկասյան խորհրդային հանրապետությունների մի քանի հիմնական առանձնահատ- կությունները, Անդրկովկասի կո- մունիստներից պահանջում է «միակ- ցամից աշխատել բարվոքել գյու-

*) Նույն տեղ, էջ 188 (ընդգծումներն իմն. է. Վ. Գ.):

**) Նույն տեղ, էջ 191:

***) Նույն տեղ, էջ 192:

*) Ленин. Том XXVI, стр. 187-188.

դացիների դրուքումը», «ելեկտրոֆիկացիայի ու վոտոգման խոշոր աշխատանքներ սկսել» (ընդդ. Լենինին ե. Վ. Պ.), վորովհետև «վոտոգման ամենից ավելի պետք է և ամենից ավելի կվերաստեղծի, կվերածնի յերկիրը, կբաղի անցյալը, կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմ»*):

Մեծ ուսուցչի այս ցուցումները կոմկուսի կոմունիստների համար աշխատանքի ու պայքարի մի ամբողջ ծրագիր էին: Դա մի լուսատու ասող էր Կոմկուսի վրա՝ դեպի սոցիալիզմ գնալու համար:

Համառոտ ստեղծագործ աշխատանք ծավալելով այդ ցուցումներին կենսագործման ուղղությամբ, Կոմկուսի բոլոր անդամներին հաջողվեց վճռել միայն յերկիրը դուրս բերել քաղաքականությունից, ամբողջովն պրոլետարական դիկտատուրան, այլև խորհրդային մեծ Միության մյուս հանրապետություններին համընթաց հասնել դասակարգային պայքարի բարձրագույն փուլին, անդասակարգ սոցիալիստական հասարակարգի կառուցմանը: Բայց այս բոլորից դատ, Անդրկովկասում խորհրդային իշխանության ամրացման ու դարգացման, դեպի սոցիալիզմ անցնելու համար առանձնապես մեծ նշանակություն ունեւր ազգային հարաբերությունները, կարգավորումը, ազգային համերաշխության որդան ստեղծելու խնդիրը:

Ընկ. Ստալինը կուսակցության 12-րդ համագումարում, ազգային հարցի շուրջը տված իր զեկուցման մեջ ասում է. «Յեթե Խորհրդային իշխանությունը չկարողանար միայնակ կառուցել հիմքեր ազգային խաղաղության որդան, բաղխումները ու կոմպլիկտները հարթելու որդան—մենք վերադարձած կլինեյինք ցարիզմի եպիստային կամ դաշնակցականների, մուսավաթիստների, մենշևիկների եպիստային, յերբ մարդիկ այրում ու մորթում էյին միմյանց»**):

*) Л. Н. Н. Том XXVI, стр. 192, (ընդգծումն իմն է. Վ. Պ.)

**) Ստալին, Ազգային հարցը, էջ 161-168, Մոսկվա 1927 թ.

Ծահույանը նույնպես, իր ժամանակին քանիցս չեւտել է նացիոնալիզմի վտանգը, ասելով՝ «Կովկասում հեղափոխության ամենադժվար բշխման միջոցն անցիոնալիզմն է յեղել»):

Ինքնին հասկանալի չէ, վոր կոմունիստները, վորոնք նացիոնալիզմի իդեոլոգիայի ու նրա կրողների դեմ յերկարամյա պայքարի փորձ ունեյին, չեւտում էյին նացիոնալիզմի վտանգը դեռևս նրա սկզբնական փուլում չըջանում, չեյին կարող հեղափոխության ամենադժվար աշխատանքները չեւտել: Դա չեւտելու պատճառներն էլ յերբ ընկ. Ստալինի թեւովոր արտահայտություններով «վայրենի դեկլատները» կատարել էյին իրենց գործը, յերբ նրանց թունոտ ազգայնական պայմաններում կտրուկ էյին Ադրկովկասի տարբեր ազգությունների բանավորները ու գյուղացիները ինտելիցիտնալ կապերը:

Կասկածից վեր է, վոր հեղափոխության հաղթանակն ամրապնդելու, սոցիալիստական խաղաղ շինարարության անցնելու համար, ամենից առաջ, անհրաժեշտ էր վերականգնել Անդրկովկասի ժողովուրդների խախտված ինտերնացիոնալ կապերը, լիակատար համերաշխություն ստեղծելով նրանց միջև: Այնպես վոր բնավ պատահական չէ, յերբ Լենինը, 1920 թ. նոյեմբերի վերջերին, ստանալով Հայաստանի խորհրդայնացման լուրը, Հայհեղուկ մի նախադաս ընկ. Կասյանին ուղղած իր մի քանի տող միայն պարունակող հեռագրի մեջ, վորջուկնալով Հայաստանի ազատագրումն իմ պերիալիզմի լծից, առանձնապես չեւտում է Հայաստանի, Տաճկաստանի և Ադրբեջանի յեղքայրական ժողովուրդների միջև ազգային համերաշխություն ստեղծելու անհրաժեշտությունը**): Իսկ ընկ. Ստա-

*) Ս. Շահումյան, Յերկերի ժողովածու, Կ. II, էջ 112, Մոսկվա, 1928 թ.:

**) «Правда», № 273, 1920 г., 4-го декабря.

լինը դեկտեմբերի 3-ին այդ առթիվ տված իր հեռագրի մեջ, խոսելով «Հայ սոցիալ-ազգայնականների» կողմից Հայաստանն ավերակ դարձնելու, թուրքերի հետ մղած պատերազմի հետևանքով առաջացած անսահման բշխանության մասին, ասում է. «Հայաստանը խորհրդային հոչակվելով վերջ կտրվի հայերի ու բուրգերի միջև գոյություն ունեցող դարավոր խոսվորություններին»): Սա ցույց է տալիս, թե ինչքան էյին մտահոգված ընկ. Լենինը և ընկ. Ստալինն Անդրկովկասի ժողովուրդների միջև ազգային համերաշխություն ստեղծելու խնդրով: Յեղ դա հասկանալի չէ:

Մեր կուսակցությունն, իբրև հեղափոխական մարքսիզմի միակ հետևողական ներկայացուցիչն ու կրթողը, հեղափոխական պրոլետարիատի ավանգարդը, ինչպես միշտ, առավել ևս պրոլետարիատի դեկտատուրայի չըջանում, կարող էր գործադրել միմիայն պրոլետարական ինտերնացիոնալիզմի քաղաքականությունը:

Բուրժուազիան հեղափոխության դեմ կռվելու, իր տիրապետությունը հարատև դարձնելու նպատակով, ինչպես հայտնի չէ, գործի, վտանգի հանդեպ, սոցիալական դեմագոգիայի բանավորական արևոտիկա-տիային կաշառելու և նրան բանվորության հեղափոխական խավերի դեմ լարելու, սոցիալ-դեմոկրատիային ոգտագործելու և բազմաթիվ այլ սոսոր միջոցառումներից դատ, գործադրում է նաև տարբեր ազգությունների ինտերնացիոնալ ֆրոնտը ջլատելու քաղաքականություն՝ ազգայնական թույն սրսկելով նրանց մեջ: Բուրժուազիայի պատմական միասխան, նրա տնտեսական-քաղաքական կացությունը ռեակցիոն են դարձնում նրան նաև ազգային հարցում: Տապալելով բուրժուա-կալվածատիրական կարգերը մեղ մոտ, վերացնելով դասային, դասակարգային, ինչպես և ազգային արտո-

նությունները, պրոլետարիատը դրանց տեղ չըրեց և չեր կարող դնել նորերը: Նա կոչված էր վերջ դնելու նման մենաշնորհումներին: Պրոլետարիատն իր ելույթյամբ միջադեպայնան է: Դեռևս «Կոմունիստական մանիֆեստ»-ից և «Կոմունիստների միություն»-ից առաջ, 1846 թվին, Մարքսն ու Ենգելսը խոսելով «Ժողովուրդների յեղքայրություն» լուրագր «Պրոլետարների յեղքայրություն» վոխարինելու անհրաժեշտության մասին, նշել են պրոլետարիատի վերագային, ինտերնացիոնալ լինելը: «Բուրժուազիան, զբոս է Ենգելսը, յուրաքանչյուր յերկրում ունի իր ուրույն շահերը, և քանի վոր այդ շահերը նրա համար բարձր են ամեն ինչից, ուստի նա յերբեք չի կարող վեր լինել ազգայնությունից: Պրոլետարները մասսայորեն, իրերի զարգացման շնորհիվ, զրկված են ազգային նախապաշարմաներից, և նրանց վորջ դարգացումն ու շարժումն ըստ ելույթյան հումանիտար են և հակազգային: Միայն պրոլետարները կարող են վոչնչացնել ազգայնությունը: Միայն արքնացող պրոլետարիատը կարող է յեղքայրություն հաստատել տարբեր ազգերի միջև» (ընդգծումն իմն է. Վ. Պ.):

Մի այլ տեղ Ենգելսը գրում է, վոր «Բոլոր ազգային բշխանությունները են միայն խոշոր հողատերերի - ֆեոդալների և կապիտալիստների տիրապետության ժամանակ, վոր նա ծառայում է այդ տիրապետության հավերժացման համար, վոր չեյի և գեյմանացի բանվորներն ունեն միևնույն ընդհանուր շահերը, և հենց վոր բանվոր դասակարգը նվաճեց քաղաքական իշխանությունը, կվերացնի ազգային բշխանակի բոլոր առիթները, վերականգնի բանվոր դասակարգի իր բնույթով միջազգայնական ե»*):

«Կոմունիստական մանիֆեստ»-ի մեջ ևս, Մարքսն ու Ենգելսը հա-

*) К. Маркс и Ф. Энгельс, «Письма», стр. 397-398, (ընդգծումն իմն է. Վ. Պ.)

*) «Правда», № 273, 1920 г. 4-го декабря.

տուեկ ուշադրութեան են նվիրել աղ-
գային հարցին: Այդտեղ նրանք դը-
րել են. «Բանվորները հայրենիք
չունեն: Չի կարելի նրանցից խել
այն, ինչ վոր նրանք չունեն: Զի-
տեղով ամենից առաջ նվաճել՝ քաղա-
քական իշխանութիւնը, հասնել մեկ
դասակարգի, հաստատել իրեն վոր-
պես ազգ, պրոլետարիատը տակա-
վին մնում ե ազգային, թեև վոչ
յերբեք այն իմաստով, ինչպես հաս-
կանում ե բուրժուազիան:

Ազգային կղզիացումները ե ժողո-
վուրդների շահերի հակասութիւն-
ներն արդեն ավելի ու ավելի յեն
վերանում բուրժուազիայի դարգաց-
ման, ազատ առևտրի համաշխարհա-
յին շուկայի, արդյունաբերական
արտադրութեան միակերպութեան ե
դրանց համապատասխան կյանքի
հարաբերութիւնների շնորհիւ: Պրո-
լետարիատի տիրապետութիւնն ա-
վելի ես պիտի արագացնի նրանց վե-
րացումը: Նրա ազատազրութեան ա-
մենաառաջին պայմանն առնալով
քաղաքակրթ յերկրների միասնական
գործակցութիւնն ե: Այն չափով,
ինչ չափով վերանալու յե մի անհա-
տի շահագործումը մյուսի միջոցով,
նույն չափով ել պիտի վերանա մի
ազգի շահագործումը մյուսի կող-
մից»^{*)}:

«Կոմունիստները... չունեն վորեւե
շահ, վոր անջատ լինի վորջ պրոլե-
տարիատի շահերից:

Նրանք չեն առաջադրում ստանձին
սկզբունքներ, վորոնց համեմատ կա-
մենային ձևավորել բանվորական
շարժումը:

Կոմունիստները պրոլետարական
մյուս կուսակցութիւններից տար-
բերվում են մի կողմից նրանով,
վոր ազգային սահմաններում տեղի
ունեցող պրոլետարական զանազան
պայքարներից նրանք առաջ են քա-
շում ե արժեք տալիս այն շահերին,
վորոնք անկախ են ազգութանից ե
ընդհանուր են վոչ պրոլետարիատի
համար, իսկ մյուս կողմից՝ նրանով,

վոր պրոլետարիատի ե բուրժուա-
զիայի միջև տեղի ունեցող կռիւի
դարգացման զանազան աստիճաննե-
րում նրանք միշտ պաշտպանում են
ամբողջական շարժման շահը»^{*)}:

Մարքսն ու Ենգելսը կանգնած լի-
նելով պրոլետարիատին միջադպիւն
մասշտաբով դասակարգային կռիւի
դրոշի շուրջը համախմբելու տեսա-
կետի վրա, հանդիսանալով այդ մեծ
գաղափարի ու գործի ներշնչողնե-
րը, տոն տվողներն ու ղեկավարնե-
րը, ինքնրստինքյան հասկանալի յե,
վոր նրանք չեն կարող հատուկ
ուշադրութիւն չնվիրել տարբեր
ազգութիւնների բանվորներին այդ
գործի շուրջը համախմբելու վրա:
Հենց այդ ե պատճառը, վոր հա-
կառակ պրոլետարիատները, Մարքսն
ու Ենգելսը գիտակցելով ազգային
հարցի քաղաքական կարևորութիւն-
ը պրոլետարիատի ընդհանուր հե-
զափոխական պայքարում, մշակեցին
իրենց հայացքները նաև ազգային
հարցի մասին, հայացքներ, վորոն-
ցով յերկար տարիների ընթացքում
առաջնորդվել ե հեղափոխական
պրոլետարիատը, հայացքներ, վո-
րոնց հիման վրա միայն, հետագա-
յում, Լենինն ու Ստալինը մշակեցին
ու զարգացրին ազգային հարցի բոլշև
վիկյան ուսմունքը: Կանգնած լինելով
վորջ ճնշված մարդկութիւնն ազո-
տագրելու տեսակետի վրա, անհաշտ
կռիւ հայտարարելով ամեն կարգի
ազգային ճնշման դեմ, նրանք միա-
ժամանակ ազգարարում եյին, վոր
«չի կարող ազատ լինել մի ժողո-
վուրդ, վոր մնջում ե ուրիշ ժողո-
վուրդների»: Բայց գործը Մարքսի
ու Ենգելսի մոտ ղեկավարացիաներով
չի սահմանափակվում, ինչպես շատ
հաճախ հանդիպում ենք բուրժուա-
կան ու մանր բուրժուական «սոցիա-
լիստներին» մոտ: Նրանք կողմնակից
են ազգերի լիակատար ինքնորոշման
միջև անջատումն: «Առանց յուրա-
քանչյուր ազգի անկախութեան ու
համախմբման՝ չեն կարող տեղի ու-
նենալ վո՛չ պրոլետարիատի միջազ-
գային համախմբումն, վո՛չ ել այդ

ազգերի խաղաղ ու գիտակցական
աշխատակցութեան՝ ընդհանուր նը-
պատակների համար»՝ գրում ե Են-
գելսը՝ 1893 թ. «Կոմունիստական մա-
նիֆեստ»-ի խաղաղ հրատարա-
կութեան առաջաբանում: 1892 թ.
օգոստոսի 30-ի, Վ. Ադլերին
գրած նամակում Ենգելսն այդ
առթիւ ասում ե հետևյալը.
«Համապարփակութիւնը չենք
հետ՝ քաղաքական անհրաժեշտու-
թիւնն ե: Նրանք ապրում են
Գերմանիայի կենտրոնում, մենք
կապիտալ ենք նրանց հետ, ինչպես ե
նրանք մեզ հետ, ե մենք ամբողջ-
վին շահագրգռված ենք, վորպեսզի
թույլ չտանք, վոր այստեղ առաջա-
նա յերկրաստորդ չենու-ուսական
պանդախական վորջ: Ծիշտ ե, մի-
ջոցներ կան յերկար ժամանակով
գրան վերջ տալու համար, բայց
լավ ե անել այնպես, ինչպես ավելի
լավ ե: Յեւ յեթե նրանք կարողանան
մեզանից ստանալ այն ամենը, ինչը
վերաբերում ե չեխական հողի վրա
ազգային ամբողջութեան, ինչը նը-
րանք ցանկանում են ե կարիքն ըզ-
րում, ապա գրանում չկա վոչ մի
փոխանգ (դու տեսնում ես՝ յես այդ
ուղղութեամբ գործում եմ, վոչ մի
ուշադրութիւն չդարձնելով Գերմա-
նիայից նրա ժամանակավորապես
քաղաքական անջատման վրա»^{*)}:

Մարքսը 1869 թվին, յեննելով ան-
գլիական բանվորների հեղափոխա-
կան պայքարի շահերից, պահան-
ջում եր Իռլանդիայի անջատումն
Անգլիայից, ընդվորում նա ավելաց-
նում եր՝ «քո՛ղ վոր անջատումից
հետո գործը հասնի ֆեդերացիայի»
կամ 19-րդ դարի կեսին, ինչպես
յնի. Ստալինն ե ասում, նա իրա-
վացիորեն պաշտպանում եր ուսա-
կան Լեհաստանի անջատումը:

Ինչպես դժվար չե նկատել, Մարք-
սն ու Ենգելսը ղեկով ազգու-
թիւնների անկախութեան, ինքնո-
րոշման խնդիրը, միաժամանակ
կողմնակից են նրանց համախմբման:
Մանր-բուրժուական ֆեդերալիզմի,

սոցիալիստական փոխարեն նը-
րանք պաշտպանում են ղեկավարա-
կան ցենտրալիստական հայացքներ.
ե հայար անդամ ճիշտ ե Լենի-
նը, յերբ գրում ե, թե՛ «Մարքսը
ցենտրալիստ ե», կամ ֆեդերալիզ-
մի հանրապետութեան ձևը, վոր Ենգել-
սը գործադրելի յե համարում Գեր-
մանիայի համար, իսկ Մարքսը դեմ
չե նրա կիրառելուն Իռլանդիայում,
այդ նրանք քննում են «կամ իբրև
բացառութիւն ու զարգացման ար-
գել, կամ իբրև անցում միապե-
տութիւնից ցենտրալիստական հան-
րապետութեան, իբրև «մի քայլ ա-
ռաջ» վորո՞ք հատուկ պայմաննե-
րում»^{*)}:

Գիտական սոցիալիզմի հիմնադիր-
ների հայացքներն ազգային հարցի
մասին, նրանց քարոզած ինտերնա-
ցիոնալիզմը, ինչպես նրանց վորջ
ուսմունքը, ուղենիշ եր պրոլետա-
րիատի մեծ ուսուցիչները՝ Լենինի
ե Ստալինի համար, իմպերիալիզմի
ու պրոլետարական հեղափոխութեան
եզրկալում ավելի քան քաղաքական
կարևորութիւնն ստացած ազգային
հարցի բարդ պրոբլեմների լուծման
համար:

Անդրկովկասի ազգային հարարե-
րութիւնները կարգավորելու ընա-
ղալառում Լենինի ե Ստալինի արած
բոլոր ձեռնարկումները ես իրաւո-
ւած եյին նրանց նախորդների՝
Մարքսի ու Ենգելսի վեհ գաղափար-
ների վրա, նրանք մինչև վերջ հա-
ղեցած եյին պրոլետարական ին-
տերնացիոնալիզմով: Անդրկովկասի
բազմազգի աշխատավորութեան շա-
հերն ել հենց այդ եյին պահանջում:
Նացիոնալիստական կուսակցութիւն
ների ցանած ազգային թշնամանքի
վորմը միայն պրոլետարական ին-
տերնացիոնալիզմը կարող եր արմա-
տախիլ անել: Հենց դրա համար ե
վրաստանի, Ադրբեջանի, Հայաստա-
նի, Դաղստանի ե Լեռնային հանրա-
պետութեան կոմունիստներին ուղ-
ղած 1921 թվի ապրիլի 14-ի, արդեն
հիշված իր հռչակավոր նամակում,

^{*)} «Կոմունիստական մանիֆեստ» էջ՝ 48,
49. գերմ. թարգմ. Ս. Կասյան. 1927 թ.
Յերևան.

^{*)} Նույն տեղ, էջ 43.

^{*)} К. Маркс и Ф. Энгельс.
«Письма», стр. 397, Москва, 1932 г.

^{*)} Ленин. Том XXI, стр. 419.
(ընդգծումն իմն ե. Վ. Գ.)

1008
36741

Լենինը գրում է. «Ձերմագին վողդու-
նելով կովկասի խորհրդային հան-
րապետությունները, յես բույլ եմ
ապիս ինձ հույս հայտնել, վար նը-
րանց ներս միությունը կատեղծի
ազգային խաղաղության մի այնպի-
սի որինակ, վար չի տեսնված բուր-
ժուազիայի ժափանակ և վորն ան-
հնարին և բուրժուական հասարա-
կակարգում»:

Ազգային խաղաղության այդ որի-
նակը, հանձին Ռուսաստանի Սո-
ցիալիստական Ֆեդերատիվ Սորհրդ-
դային Հանրապետության մեջ մտած
ազգությունների, արդեն գոյություն
ունեն:

Ազատ ու անկախ ազգությունների
միանգամայն կամավոր, խորհրդա-
յին հիմունքներով կազմակերպված
Ֆեդերատիվ միությունն, իբրև ան-
ցողիկ ձև դեպի տարբեր ազգերի
աշխատավորների լիակատար միա-
նությունը, դարձնականում արդեն
դրսևորել էր իր նպատակահարմա-
րությունը: Այն, ինչը բուրժուական
կարգերում անհնարին էր, պրոլե-
տարիատի դեկտատուրայի որոք
դարձել էր հնարավոր և նպատա-
կահարմար:

Հենց դրա համար էլ, Կոմունիս-
տական Ինտերնացիոնալի յերկրորդ
համագումարի համար՝ ազգային և
գաղութային հարցերի մասին մշա-
կած թեզերի ուրվագծի մեջ, Լենինը
նշում է, վոր «Ֆեդերացիան ընդու-
նելով իբրև անցողիկ մի ձև դեպի
լիակատար միասնություն, անհրա-
ժեշտ է ձգտել ավելի ու ավելի
սերտ ֆեդերատիվ միություն. նկա-
տի ունենալով, առաջին՝ վոր առանց
խորհրդային հանրապետություննե-
րի սերտ միության անհնարին և
պահպանել վողջ աշխարհի ռազմա-
կան տեսակետից անհամեմատ ավելի
հզոր խմբերալիստական պետու-
թյուններով չըջապատված խորհրդ-
դային հանրապետությունները, յերկ-
րորդ՝ անհրաժեշտ է խորհրդային
հանրապետությունների տնտեսական
սերտ միություն, առանց վորի ա-
նիրադրանքի յե խմբերալիզմի
քայքայած արտադրողական ուժերի
փերականդումը և աշխատավորների

բարորության ապահովումը, յեր-
րորդ՝ պետք է նկատի ունենալ, իբ-
րև ամբողջություն միասնական բո-
լոր ազգերի պրոլետարիատի կողմից
կանոնավորվող ընդհանուր պլանով
համաշխարհային տնտեսություն
ստեղծելու տենդենցը, վորպիսին
միանգամայն անհրաժեշտ էր պո-
սևորվել և դեռ խմբերալիզմի ժամա-
նակ և անպայմանորեն յենթակա յե
հետագա դարգացման ու կատարյոլ
ավարտման՝ սոցիալիզմի ժամա-
նակ»*):

Այդպիսի միությունն Անդրկով-
կասի նորաստեղծ խորհրդային հան-
րապետություններին համար ևս ա-
ռաջել անհրաժեշտ էր թե՛ տնտեսա-
կան և թե՛ քաղաքական նկատա-
ռումներով: Անդրկովկասի Ֆեդերա-
ցիան անհրաժեշտ էր ցարկվել ու
ավելի բան ազգային բուրժուական
հանրապետությունների որոք սրված
ազգային, տերրիտորիալ, արանդի-
տի, արտոնների, ջրի ու բաղմամբի
որիչ տնտեսական-քաղաքական նը-
շանկություն ունեցող հարցերն ան-
արյուն կերպով լուծելու, արտա-
քին և ներքին թշնամու դիմադրու-
թյունը միացյալ ուժերով կոտրելու
համար:

Ահա, թե ինչու 1921 թ. նոյեմե-
րի 3-ին, յերբ արդեն բավականա-
չափ նախապատրաստական աշխա-
տանք կատարված էր, մեր կուսակ-
ցության կովկասյան Բյուրոն, Ան-
դրկովկասի աշխատավորական մաս-
սանների և հասկապես Բազվի առա-
ջավոր պրոլետարիատի պահանջով,
Բազվի պլենումում անց և կացնում
մի բանաձև, վորտեղ ասվում էր.
«Անդրկովկասյան հանրապետու-
թյունների առանձին-առանձին պե-
տական գոյությունն անդոր և դարձ-
նում նրանց կապիտալիստական-
բուրժուական յերկրների առաջ:
Սերտ քաղաքական միություն հաս-
տատուն յերաշխիք կլինի հակահե-
ղափոխական ուժերի կողմից նրանց
դեմ կատարվող ամեն տեսակ վո-
տրնդություններից և կամրացնի

*) Ленин. Том XXV, стр. 287—88
(ընդգծումն իմն է. վ. Գ.):

խորհրդային իշխանությունը Մեր-
ձավոր Արևելքի սահմանում... Ան-
դրկովկասը ներկայացնում է միաս-
նական տնտեսական ամբողջություն,
և նրա տնտեսական դարգացումը
կարող է կատարվել համաանդրկով-
կասյան միավորման նշանի տակ...
Կովկասյան Բյուրոն անհետաձգելի
անհրաժեշտություն և համարում
Ֆեդերատիվ միության կերպով
հանրապետությունների միջև, ամե-
նից առաջ ռազմական, տնտեսական
ու Ֆինանսական աշխատանքի ու
միջազգային քաղաքականության բը-
նադրավորում: Անհրաժեշտ է ճանա-
չել անդրկովկասյան հանրապետու-
թյունների վարչական-տնտեսական
և քաղաքական կենտրոնի «դաշնա-
կից խորհրդի» ստեղծումը»:

Անդրֆեդերացիայի կազմակեր-
պումը լայն արձագանք է գտնում
Բազվի առաջավոր պրոլետարիատի,
Թիֆլիսի, Բաթումի, Յերևանի բո-
լոր բանվորների ու վողջ Անդրկով-
կասի աշխատավորության շարքե-
րում: Մեր կուսակցությունն ընդ-
հուլ մոտենում է Լենինի 1921 թ.
ապրիլի 14-ի նամակի համապատաս-
խան կետի պրակտիկ կենսագործ-
մանը:

1921 թ. նոյեմբերի 28-ին Լենինը
գրում է իր հայտնի նախագիծն ան-
դրկովկասյան հանրապետություն-
ների Ֆեդերացիա կազմելու մասին:
Այնտեղ ասված է.

1. «Անդրկովկասյան հանրապե-
տությունների ֆեդերացիան ֆանա-
չել սկզբունքորեն բացարձակապես
նիշտ և անպայման իրագործման
յենթակա, բայց գործնականապես
անհատալ իրականացնելու իմաս-

Ընկ. Ստալինի ուղղումը, վորն ընդունում
է Լենինը, «Պահանջվում է մի ֆանի շարք՝
ֆնմության համար» բառերի փոխարեն մուդ-
վում է՝ «Պահանջվում է վորք ժամանակ՝
ֆնմության համար», վորովհետև, ըստ ընկ.
Ստալինի, Վրաստանը նոր էր միայն խոր-
հրդայնացել և այդքան կարճ ժամանա-
կում անկարելի կլինի այդ խնդրը Վրաս-
տանում կենսագործել, «իսկ առանց Վրաս-
տանի, — ասում է ընկ. Ստալինը, — Ֆեդե-
րացիան Բազվի վրա կլինի»:

տով՝ վաղաժամ, այսինքն՝ պա-
հանջվում է մի ֆանի շարք՝ ֆնմ-
(նության*), պրոպագանդի և ներ-
քնից անցկացնելու համար:

2. Առաջարկել Վրաստանի, Հա-
յաստանի և Ադրբեջանի կենտրոնա-
կան կոմիտեներին՝ այս վորոշումը
կիրառել կյանքում»*):

Ընկ. Ստալինի ուղղումով քաղ-
բյուրոն 1921 թ. վերջերին, միա-
ձայն ընդունում է Լենինի առաջար-
կած այս նախագիծը, իսկ 1922 թ.
մարտի 12-ին անդրկովկասյան հան-
րապետությունների կենտգործկոմ-
ների լիազոր համագումարը վերջ-
նականապես ձևակերպում է Ան-
դրկովկասի Սոցիալիստական խոր-
հրդային Հանրապետությունների
Ֆեդերատիվ Միությունը:

Անդրկովկասյան հանրապետու-
թյունների Ֆեդերացիա կազմելուց
հետո յե, ինչպես հայտնի յե, մեր
կուսակցությունը, Լենինի ու Ստա-
լինի դեկավորությամբ, մեծ պայ-
քար մղեց, ինչպես բազմազգի խոր-
հրդային Միության մեջ, նույնպես
և Անդրկովկասում ազգությունների
փաստական հավասարություն ստեղ-
ծելու համար: Հոկտեմբերյան հե-
ղափոխությունն արդեն հնարավոր
էր դարձրել այդ, և մեր կուսակ-
ցությունն ընդհուպ մոտեցել էր
այդ հարցի կոնկրետ լուծմանը:
Իսկ ազգային հարցի լուծումը խոր-
հրդային Միության մեջ, ինչպես
կուսակցության 10-րդ համագու-
մարում տված իր գեկուցման մեջ
ընկ. Ստալինն է ասում՝ «կայա-
նում է նրանում, վորպեսզի վոչըն-
չացվի ազգությունների այն հե-
տամնացությունը (տնտեսական,
քաղաքական, կուլտուրական), վոր
մենք ժառանգել ենք անցյալից, վոր-
պեսզի հնարավորություն տրվի հե-
տամնաց ժողովուրդներին հասնելու
կենտրոնական Ռուսաստանին թե՛
պետական, թե՛ կուլտուրական և թե՛
տնտեսական տեսակետից»**):

*) Ленин. Том XXVII, стр. 94
(ընդգծումն իմն է. վ. Գ.):

**) Протоколы X съезда РКП(б),
стр. 188.

Ленин, Том XXVII, стр. 508—509
(ընդգծումն իմն է. վ. Գ.):

Անդրկովկասյան ժողովուրդները ցարիզմի որոշ գրաված լինելով դադարեցին ճնշման լծի տակ, բայց ել աշխատեցին չափով իրենց վրա կրում ելին հետամնացութեան, ապականութեան կնիքը:

Ազգային համերաշխութեան ու համագործակցութեան խորհուրդների ընտանիքում, նրանց հնարավորութեան եր ընձեռնելով լիկվիդացիայի յենթարկել անցյալից ժառանգութեան մնացած այդ հետամնացութեան, ապականութեան, հասնել Ռուսաստանի առաջավոր շրջաններին, ստեղծել ձևով ազգային, բովանդակությամբ պրոլետարական իրենց կուլտուրան:

Բայց բանն այն է, վոր Անդրկովկասում, նացիոնալիստական կուսակցութեանների ստեղծած ազգային անխտաճութեան միջոցառում, անբան էլ հեշտ չէր ազգային համերաշխութեան որդան ստեղծելը: Զեռնարկելով Անդրֆեդերացիայի կազմակերպմանը, կուսակցութեանը նախատեսում էր այդ դործի վորդ ղ ժվարութեանները, տեղական նացիոնալիզմի աշխուժացման հնարավորութեանը:

Նամանավանդ ընկ. Ստալինը, վորն յերկար տարիների ընթացքում զլխավորել էր Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպութեանների պայքարը, կոմիտեով բաղմապղի Անդրկովկասի հեղափոխական պայքարի բովում, ազգային հարցի մարքսիստական ըմբռնման ու լուծման փայլուն որինակներ եր տվել նախապատերազմյան տարիներին, յերբ Լենինը, պայքարելով յերկու Փրոնտի վրա, ավելի քան պարզորոշ կերպով ձևակերպեց ազգային հարցի հիմնական դրույթները, այդ չրջանում ահա, Լենինի աշխատութեանների կողքին, ընկ. Ստալինն ի դեմս իր «Ազգային հարցի մարքսիզմը» հայտնի աշխատութեան (տպված 1913 թ. «Просвещение» մարքսիստական հանդեսում), մարքսիստական թեորետիկական դրականութեան մեջ, Լենինի իսկ տված դնահատականի համաձայն, առաջնահերթ արժեք ունեցող զործ եր

տվել, վորտեղ խիստ քննադատութեան յենթարկելով Բենեդե-Բաուերի թեորիան, Բուդդի, կովկասյանների և ընդհանրապես լիկվիդատորների ազգային հայացքների նացիոնալիստական ելույթները, հեղափոխական մարքսիզմի պրինցիպների լույսի տակ ավելի կոնկրետացնում, զարգացնում և ազգային հարցի տեսական դրույթները, հիմնավորում նրա լուծումը հեղափոխական մարքսիզմի վորով և այլն, նա հմտորեն կոնխատեսում էր նացիոնալիստական տարրերի կողմից հնարավոր յեկույթներն Անդրֆեդերացիայի դեմ և ժամանակին կուսակցութեանն ահագնող եր տալիս այդ վրտանդի դեմ պայքարելու համար: Հենց Անդրֆեդերացիայի կազմակերպման մասին Լենինի առաջարկների մեջ մտցրած իր ուղղումով, վորտեղ ընկ. Ստալինը պահանջում է «մի քանի շաբաթ» ֆինուրյան համար» բառերը փոխարինել «վորոշ ժամանակ» ֆինուրյան համար» բառերով, նա նկատի յե առել այդ զործի դժվարութեանները, հակասութեանները, մանավանդ Վրաստանում, վորտեղ, բոս նրա, այդքան կարճ ժամանակում անհնարին կլինեի այդ խնդրն իրադրծել:

Ընկ. Որջոնիկիձեն, վորն այն ժամանակ ԿԱՎՅՈՒՄՈՒՄԻ ղեկավար աշխատողներից եր և կովկասյան Փրոնտի Ռադմա-հեղափոխական խորհրդի անդամ, հաշիի ստնելով Անդրկովկասի քաղաքական, կենցաղային, տեղիտորիալ, ազգային առանձնահատկութեանները, կովկասյան բանակի կազմակերպման առթիվ, նույն Փրոնտի հրամանատար Գիտտիսին 1921 թ. մարտի 21-ին գրած նամակում, առաջարկում և ամբողջ Անդրկովկասի ուղմա-քաղաքական կազմակերպութեանների ղեկավարութեանը միացնել մի միասնական որդանի՝ ՌՇՊ-ի ձևով, քանի վոր, ինչպես նա յե առում՝ «նկատվում և առանձին հանրապետութեանների ձգտումն դեպի նեղ ազգայնական անջատումն, սեպարատիզմ, իսկ յերկրորդ բանակային որդանի ստեղծումը, իր տեր-

րիտորիալ բաժանումներով անխուսափելիորեն կուժեղացնի սեպարատիստական ձգտումը տնտեսական հարցերում և անպարման կղժվարացնի բանակի կերակրումը»^{*)}:

Նախաձեռնելով, միանգամայն կամալոր հիմունքներով, անդրկովկասյան խորհրդային հանրապետութեանների Ֆեդերացիայի կազմակերպումը, թե՛ ընկ. Լենինը և թե՛ ընկ. Ստալինը Անդրֆեդերացիան, ինչպես առհասարակ ամեն բան, չեն համարում ինքնանպատակ, դրա վրա նայում ելին իբրև մի միջոցի, վորը պետք և ապահովեր համագործակցութեան Անդրկովկասի ժողովուրդների միջև, ջանջախիչ հարված հասցնեի ՆեՊ-ի հետևանքով դուրս բարձրացնող մեծապետական և տեղական չովինիզմին, Արևելքի դուռնը միացյալ ուժերով դուրս դար իմպերիալիզմի դեմ, խորհրդային Միութեան հետ դեպի սոցիալիզմ արագ անցում կատարելու համար: Այս ամենից հետո, ի հարկե, չէր կարելի չսպասել նացիոնալիստական, հակահեղափոխական տարրերի յեկույթը Լենինի և Ստալինի նախաձեռնութեան դեմ՝ Անդրֆեդերացիան ձախողելու նպատակով:

Սակայն, ինչպես հայտնի յե, Անդրֆեդերացիայի դեմ յեղան վոր՝ միայն բուրժուա-նացիոնալիստական տարրերը, այլև վրացական կոմունիստների մի խումբ, Բուդու Մդիվանու ղեկավարութեամբ, այսպես կոչված նացիոնալ-ուկրոնիստները:

Նացիոնալ-ուկրոնիստներն, ինչպես կուսակցութեան 12-րդ համագումարում նշել և ընկ. Ստալինը, ուղղվելով Վրաստանի նպատակով աշխարհադրական դիրքից, ձգտում ելին արտոնյալ վիճակի-Հայաստանի և Ադրբեջանի նկատմամբ, պաշտպանելով առանց Անդրֆեդերացիայի ՌՍՖՍՀ-ի հետ կապվելու տեսակետը:

12-րդ համագումարում ազգային հարցի մասին հիմնական դեկլացող

ընկ. Ստալինը, նրա հետ և ամբողջ համագումարն, անհրաժեշտ հակահարված են հասցնում վրացական ուկրոնիստներին և մերժում են նրանց առաջարկը, համարելով այն անդրկովկասյան ժողովուրդների ազգային համերաշխութեանն սպառնացող վտանգ: Պատահական չէ, վոր համագումարում վրացական ուկրոնիստները պաշտպանութեան են դառնում հինավուրց մենչևիկի Տրոցկու կողմից, վոր վրացական մենչևիկի եմիգրանտները և «Социалистический Вестник»-ը (եմիգրանտ մենչևիկիների որդան) ձեռքերի վրա ելին բարձրացնում նրանց:

Այսպիսով, կազմակերպչորեն ավարտվում է Անդրկովկասի ազգային հանրապետութեանների Ֆեդերացիա կազմելու լենինյան-ստալինյան մեծ նախաձեռնութեան իրականացումը: Սկսվում է Անդրֆեդերացիայի պատմութեան յերկրորդ ետապը, նրա տնտեսական-քաղաքական բազայի ամրացման ետապը: Այս չրջանում նույնպես մեր կուսակցութեանը հաջողվում է Լենինի և Ստալինի ղեկավարութեամբ, Անդրֆեդերացիայի սյուների՝ Որջոնիկիձեի, Մյասնիկյանի, Կիրովի կազմակերպած բոլշևիկյան պայքարով ջանջախիչ հարված հասցնել Անդրֆեդերացիայի յերդվալ թըշ-նամիներին՝ մենչևիկիներին, դաշնակցականներին ու մուսավաթիստներին, վրացական ուկրոնիստներին, սրբոկիստական ուղղիցիայի՝ Անդրֆեդերացիան կուսակցութեան լենինյան ղեկավարութեան դեմ ոդտադործելու փորձերին, միաժամանակ Անդրկովկասի աշխատավորութեանը ցույց տալով, վոր «Առանց անդրկովկասյան ֆեդերացիայի կովկասում խաղաղություն պահպանելի կարելի» (Ստալին):

Լենինի մահից հետո, լենինյան մեծ կուսակցութեան ընկ. Ստալինի ղեկավարութեամբ պատմով կատարեց Լենինի պատգամը: Անդրֆեդերացիան լիակատար խաղաղութեան բերեց կովկասի ժողովուրդների համար: Այնտեղ, վորտեղ յեր-

*) Центр. Архив Красной Армии, Москва, д. 294—331, Л. 577.

կար տարիներ ընթացքում յեղբայրացական կոնվուզների հետեւանքով արշաւներ եւ հոսում, չնորհիւ լինելուստատիւնյան ազգային քաղաքականութեան, չնորհիւ Անդրֆեդերացիայի մի կաթիլ արշաւն չի թափվել: Բացի այդ: Լեւինի և Ստալինի անմիջական ղեկավարութեամբ դաստիարակված Անդրկովկասի բոլշևիկյան կադրերն աննախընթաց բարձրութեան հասցրին յերեմին դադութեան հետամնաց Անդրկովկասի արտադրողական ուժերի զարգացումը:

Խորհրդային մեծ Միութեան ընտանիքում, փոխադարձ ոգնութեան և համագործակցութեան բարեկարգացում միջոցառում, տնտեսապես և կուլտուրապես բոլոր թափով աճեցին ու զարգացան Անդրկովկասի ազգային հանրապետութիւնները:

Համկոմկուսի Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի պատմական վորշմամբ, ընկ. Ստալինի անմիջական ցուցումների կենսադործումով, Անդրկովկասի ոգնութեամբ և ղեկավարութեամբ՝ ազգային կոմկուսականութիւնները, լայն ինքնադործունեութեան և նախաձեռնութեան ծավալելու հիման վրա, մեծագույն հաղթանակներ ձեռք բերեցին տեղական արտադրութեան զարգացման, յերկրի բնական ուժերի ոգտադործման և ընդհանրապես տնտեսական-կուլտուրական շինարարութեան բոլոր բնագավառներում: Առաջին հնգամյակի կենսադործումով Անդրկովկասը հետամնաց աղբարային յերկրից վերածվեց ինդուստրիալ-ազգային յերկրի: Արդյունաբերութեան ընդհանուր արտադրանքի տեսակարար կշիռն Անդրկովկասի ժողովրդական տնտեսութեան ընդհանուր արտադրանքի մեջ 1930 թվին հասավ ավելի քան 60 տոկոսի, իսկ 1934 թ. — 78,9 տոկոսի: Պրոլետարական Բազուն տալիս և նախիկ համամիութենական հանույթի 70 տոկոսը: Նախկին խուլ, հետամնաց քաղաքատիւ վայրերը՝ Փուքայիսը, Բաքունը, Կիքովաբադը (Գյանջան), Սուխումը, Լեհիսկանը և այլն, դարձել են աչքի

ընկնող արդյունաբերական-պրոլետարական կենտրոններ: Հակադարձ քայլերով առաջ և դնում քաղաքային շինարարութեանը և քաղաքների սոցիալիստական վերակառուցումը: Անդրֆեդերացիայի բոլոր երկկուտրակայանների ուժը մինչև այժմ հասել է 336.000 կիլովատի, ի դրմաց մինչև 1914 թ. յեղած մոտ 60.000 կիլովատի:

Սոցիալիստական ինդուստրիայի հզոր բաղադրի վրա հաստատապես առաջ և ընթանում նաև սոցիալիստական դյուղատնտեսութիւնը: Անդրֆեդերացիայի դյուղացիական տնտեսութիւնների համարյա կեսն ընդգրկված են կոլտնտեսութեանների մեջ: Տեխնիկական մշակույթների դժով համայնական սեկտորի յանքերի տարածութիւնը հասել է մոտ 82%-ի: 1931-33 թվականների ընթացքում կրկնապատկվել է ամեն մի տնտեսութեան յեկամուտը: Իսկ ժողովրդական ընդհանուր յեկամուտը 1930-1934 թ. հասել է 1,6-ից 2,3 միլիարդ ռուբլու: 1930 թ. բամբակ հավաքվել է 4,2 ցենտներ հեկտարից, իսկ 1934 թ. — 7,4 ցենտներ: 1932 թ. թեյ հավաքվել է 706 կիլոգրամ, իսկ 1934 թ. — 1,50 կիլոգրամ: Միսխոտ 1931 թ. հավաքվել է 5,9 ցենտներ, 1934 թ. — 7,8 ցենտներ: Բամբակի ցանքերի տարածութիւնը 1930 թ. 160.000 հեկտարի դիմաց 1934 թ. հասել է 219.000 հեկտարի: Անդրկովկասը դարձել է Միութեան բամբակագործութեան յերկարդ բազան:

Անդրկովկասի աշխատավորութիւնը վրա և դրել մեծ առաջնորդի նշան ունեւոր և յերջանիկ կյանքի ուղին:

Տնտեսական վիթխարի առաջնութեան հաստատապես ապահովեց Անդրֆեդերացիայի ժողովուրդների՝ ձեռով ազգային բովանդակութեամբ պրոլետարական կուլտուրայի զարգացումը:

Յարեղմի և բուրժուական հանրապետութիւնների որոք համատարած անդրադիտութեան, խավարի և սգիտութեան մեջ տառապող Անդկովկասի բանավորներն ու դյուղացիներն

լը, խորհրդային իշխանութեան շնորհիւ միայն, դուրս յեկան մարդկային աշդ դողդոթայից: Գրադիտութեան տոկոսը 1934 թ. բարձրացավ 87,6-ի: Մենք դառնում ենք համատարած գրադիտութեան յերկիր: Լայն տարածում ստացավ նաև տարրական, միջնակարգ ու բարձրագույն կրթական հաստատութիւնների ցանցը: 1914 թ. տարրական և միջնակարգ դպրոցներում սովորում էին 259.000 հոգի, իսկ 1934 թ. — 1.283.000 հոգի: Մինչև 1914 թ. Անդրկովկասը չուներ և վոչ մի բարձրագույն դպրոց, իսկ այժմ Անդրֆեդերացիայի յերեք հանրապետութիւնների 40 բարձրագույն ուսումնական հաստատութիւններում սովորում են 30.000 մարդ: Կովկասյան լեռնաշղթայի այս կողմը, ինչպես արձանագրել է մեր կուսակցութեան կենտրոնական որդան «Պրավդա»-ն, պայծառորեն վառվում են ինդուստրացման կրակները, արարւոքն աճում են ազգային պրոլետարական կադրերը, հեղափոխութեանը նախիկ նոր շրջաններ և հայտնաբերում, դյուղատնտեսութեանը աշխատեցնում միայն իրապես զարգանում: Այս ամենն Անդրկովկասի աշխատավորները ձեռք են բերել միմիայն հոկտեմբերյան հեղափոխութեան

ճնունդ: Անդրֆեդերացիայի, ընկ. Ստալինի անմիջական ղեկավարութեամբ դործող Անդրկովկասի բոլշևիկների համառ պայքարի շնորհիւ:

Յեւ այսպես, վոր կողմից եւ մոտենալ, ինչ անկուռից եւ նայելու լինենք՝ Անդրֆեդերացիան—դա մի պայծառ ու լուսավոր եջ է Արբեշանի, Վրաստանի և Հայաստանի պատմութեան մեջ:

Յերկարդ հնգամյակն Անդկովկասի առաջ ավելի լայն հեռանկարներ և բացել—նախիկ, սպիտակ ածուխի, քիմիական ու մետաղաձուլական արդյունաբերութեան, դյուղատնտեսութեան — բամբակի, թեյի, ցիտրուսային բույսերի մրշակութեան և կուլտուրական շինարարութեան—հետագա զարգացման պայծառ ու սքանչելի հեռանկարներ: Հեղափոխութեան պայծառ կրթակով լուսավորվում է Խորհրդային Միութեան մարդարտ Անդրկովկասը, վորպես մի կոչ և վորպես մի որինակ դադութեան Արեւելքի ճընշված բոլոր ժողովուրդների համար, վորպես լեւինյան-ստալինյան ազգային քաղաքականութեան խորթ թափանց հայացքի, բոլշևիզմի հաղթանակի փայլուն որինակ:



(Համար 3 - Գիտության համալսարան)
Արդյունաբերական
և Բնական գիտություններ

ՀՀ Ազգային գրադարան



NL0178227

